

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՎ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

080200 «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԱՆԱԶՈՐ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ.....	4
ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ.....	31
080200 «Կրթության կառավարում» մասնագիտության մագիստրոսական ծրագրի տեղեկագիրք.....	31
Մոդուլ 1. Կրթության քաղաքականություն.....	31
Մոդուլ 2. Կրթության որակի ապահովում	34
Մոդուլ 3. Ֆինանսներ և նրանց կառավարումը կրթության մեջ.....	40
Մոդուլ 4. Համագործակցություն և կառավարում.....	43
Մոդուլ 5. Կրթության հետազոտության մեթոդներ.....	49
Մոդուլ 6. Միջանձնային հարաբերություններ և առաջնորդություն.....	52
Մոդուլ 7. Մագիստրոսական թեզ.....	59

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր տարին մեր համալսարանի պատմության մեջ նշանավորվում է այս կամ այն իրադարձությամբ: 2014-ը մեր համալսարանականացման տարին եղավ: 2015-ը նշանակալից էր երկու առումներով:

1. ՀՀ ԿԳ նախարարության ՈԱԱԿ-ի կողմից բուհն արժանացավ պետական հավատարմագրման 4 տարի ժամկետով: Այս ցուցանիշով մեր համալսարանը հանրապետության մարզային բուհերի մեջ առայժմ միակն է:

2. Առաջին անգամ կատարվեց ընդունելության քննություն համալսարանական մասնագիտություններով:

Անշուշտ, սրանից հետևում են բազմաշերտ բովանդակային փոփոխություններ և դրանցից բխող մարտահրավերներ, որոնց այսօր փորձում է դիմակայել մեր համալսարանը:

Բուհում առաջին հերթին փոփոխվել են այն ուղղությունները, որոնք նախկինում գերակայում էին մեր բուհի պատմության ողջ ընթացքում: Ասվածից դժվար չէ ենթադրել, որ ներկայումս վերանայման խնդիր ունեն համալսարանի տեսլականն ու առաքելությունները և դրանցով պայմանավորված հետազոտործունեությունը:

Մեր բուհին առաջին անգամ հնարավորություն է ընձեռվել կրթություն իրականացնելու համալսարաններին հատուկ ավանդական մասնագիտություններով, ինչը հնարավորություն է ընձեռում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բավարարելու մեր տարածաշրջանի երիտասարդության կրթական կարիքները:

Այն ժամանակաշրջանը, որում Վանաձորի պետական համալսարանը ծավալում է իր գործունեությունը, ընդհանուր առմամբ բնութագրվում է անցումային շրջանին հատուկ գծերով: Այդ է պատճառը, որ ամեն մի քայլ, որը կատարվում է համալսարանում, պետք է ավելի քան հիմնավորված և համակարգված բնույթ կրի: Խոսքը վերաբերում է համալսարանում տեղի ունեցող բոլոր գործընթացներին, մասնավորապես՝ բուհի ինքնավարությանը, որը ենթադրում է անկաշկանդ վերաբերմունք կազմակերպչաիրավական, ֆինանսատնտեսական, հաստիքային և ակադեմիական ոլորտներին, կառավարմանը, ուսանողակենտրոն կրթության կազմակերպմանը, որակի ապահովմանը, գիտական գործունեությանը և այլ ուղղություններին միտված գործողություններին, որոնք այսօր կատարվում են համալսարանում, և որոնք բոլորը միասին ձևավորում են տեսլականից դեպի իրականը տանող ճանապարհը:

Համոզված եմ, որ Վանաձորի պետական համալսարանն ունի մտավոր և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց ճիշտ ներդրմամբ կարելի է հասնել հաջողության: Համոզված եմ, որ համախոհությամբ, փոխադարձ հանդուրժողականությամբ, ինչպես նաև պետության ու հասարակության առջև հաշվետվողականությամբ ու պատասխանատվությամբ առաջնորդվելու դեպքում միասին կհաղթահարենք արդի ժամանակաշրջանին բնորոշ դժվարությունները հանուն մեր երկրի, հանուն մեր այսօրվա և վաղվա սերունդների:

ՌԵԿՏՈՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՍ I. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՑ

1. Ընդհանուր դրույթներ

1. Բոլոնիայի գործընթացին ինտեգրումը ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակլավավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես, ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:

Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որոնք ենթադրում են մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

2. Մույն կանոնակարգը հիմնվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ»-ի, «Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»-ի և ՀՀ ԿԳՆ հրահանգչական նամակների վրա:

3. Կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում գիտխորհրդում հաստատման օրից և նույն ժամանակից ուժը կորցրած է ճանաչվում «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգ»ը (ընդունված գիտխորհրդում 29.10.2007թ.):

2. Կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները

4. Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ՎՊՀ-ի բակլավավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում.

- Բակալավրիատը բարձրագույն կրթության առաջին աստիճանն է, որը ներառում է 3-4 լրիվ ուսումնական տարիների ավարտուն դասընթացներ: ՎՊՀ-ում բակալավրիատի տևողությունը 4 ուսումնական տարի է:
- Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է, որի տևողությունը 1-2 տարի է (ՎՊՀ-ում` 2 տարի), հեռակա ուսուցման համակարգում` 2,5 տարի:
- Ասպիրանտուրան հետբուհական կրթության աստիճան է:
Ասպիրանտուրայի տևողությունն առկա ուսուցման համակարգում 3 տարի է հեռակա ուսուցման համակարգում` 4 տարի:
- Ուսումնական տարին ուսանողի 40 շաբաթյա բոլոր տեսակի ուսումնական արդյունավետ աշխատանքների ժամանակն է, որից առնվազն 32 շաբաթը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին և իրականացվում է երկու կիսամյակներով` աշնանային և գարնանային:
- Կարողությունը (կոմպետենցիան) գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական ուսման տվյալ բնագավառի համար (առանձնահատուկ) և ընդհանուր (անկախ բնագավառից):
- Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ)կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման համակարգով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին:
- Կրթական (ուսումնական) մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է` դրանով սահմանափակված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ:
- ECTS Կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

3. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշները

5. ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում` մասնակցությունը, դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

6. կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը,

7. կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված էլքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,

8. ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

9. կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

10. կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

4. Կրեդիտային համակարգի կարևոր հատկանիշները

11. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:

12. Կրեդիտների կուտակման և փոխանցման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որում ուսանողի մեկ ուսումնական տարվա լրիվ ուսումնական աշխատածավալը չափվում է 60 ECTS կրեդիտով:

Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

13. ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների էլքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և

գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին) :

5. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում.

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) կրեդիտների կուտակում.

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ,

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով :

14. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

• գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով.

• կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող բուհի ծրագրերին համապատասխան :

15. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

• պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,

- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսին նախապատվություն տալուց,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն :

6. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսական ծրագրի աշխատանքային ծավալը

16. ՎՊՀ-ում մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր, ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):

17. ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

18. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածությունը գնահատվում է 1,5 կրեդիտային միավորով, ինչը կազմում է 45 ակադեմիական ժամ (40 րոպե տևողությամբ պարապմունքների դեպքում՝ 51 ակադեմիական ժամ):

Մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 120 կրեդիտային միավոր:

19. Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով (աշնանային և գարնանային):

1-ին, 2-րդ և 3-րդ ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 20 շաբաթ, որից տեսական ուսուցում՝ 17 շաբաթ, քննաշրջան՝ 3 շաբաթ: 4-րդ կիսամյակի տևողությունը 20 շաբաթ է (3 շաբաթ՝ գիտամանկավարժական պրակտիկա, 3 շաբաթ՝ գիտահետազոտական պրակտիկա, 14 շաբաթ՝ մագիստրոսական թեզի նախապատրաստում և պաշտպանություն):

20. Մագիստրոսի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 15-18 ժամ:

21. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը որոշ դեպքերում սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

7. Դասընթացները և կրթական մոդուլները

22. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

23. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

24. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսական ծրագրում, և ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

8. Կրեդիտների հատկացումը

25. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին առաջադիմության ուսանողից պահանջվող անհրաժեշտ աշխատաժամանակի իրատեսական կանխատեսումից:

26. Կրթական արդյունքի դրական գնահատման դեպքում մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ:

27. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտների համար նախընտրելի է սահմանել ամբողջական թվերով արժեքներ:

28. Դասընթացին (կրթական մոդուլին) հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Լսարանային ժամերի թիվը կախված է պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:

29. ՎՊՀ-ում ընդունվում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտային միավորների լսարանային և արտալսարանային աշխատաժամայինների հետևյալ մոտավոր հարաբերակցությունը.

Մագիստրատուրայում`

- 3 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 4 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 2 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ լաբորատոր աշխատանք և 2 ժամ ինքնուրույն աշխատանք:

Ընթացիկ և հանրագումարային ստուգումների համար.

- Քննությանը պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,5 կրեդիտային միավոր:
- Այն մասնագիտական առարկաներին, որոնց դասավանդումը հիմնականում իրականացվում է գործնական կամ լաբորատոր պարապմունքների ձևով և նախատեսվում է քննություն, քննությանը պատրաստվելու համար շաբաթական յուրաքանչյուր ժամի դիմաց հատկացվում

է 0,125 կրեդիտային միավոր:

- Տեսական մասից ստուգարքով ավարտվող առարկայի ստուգարքին պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,25 կրեդիտային միավոր:

30. Պրակտիկաների յուրաքանչյուր շաբաթվան և պաշտպանությանը տրվում է 1,5 կրեդիտային միավոր:

31. Կուրսային աշխատանքի (մագիստրատուրայում նաև ռեֆերատի ու զեկուցման) կատարումը և պաշտպանությունը գնահատվում է 3 կրեդիտային միավորով:

32. Բակալավրիատի 4-րդ տարվա յուրաքանչյուր կիսամյակում բակալավրի ավարտական թեզի աշխատանքների կատարման համար տրվում է 2 կրեդիտային միավոր, շարադրմանը և պաշտպանությանը` 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):

33. Մագիստրոսական ատենախոսության թեմայով հետազոտական աշխատանք կատարելու համար նախատեսվում է 15 կրեդիտային միավոր (ըստ կիսամյակների՝ 0, 3, 6, 6), իսկ թեզի շարադրման և պաշտպանության համար՝ 12 կրեդիտային միավոր:
34. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարի համար հատկացվում է 12 կրեդիտային միավոր (3-ական միավոր յուրաքանչյուր կիսամյակի համար):
35. Պետական ավարտական յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար տրվում է 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):
36. Մարմնակրթության համար կրեդիտային միավորներ չեն նախատեսվում:

9. Մագիստրոսի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

37. Մագիստրոսի կրթական ծրագիրը բաղկացած է երկու հիմնական հատվածներից՝ ուսումնական ծրագրից և գիտահետազոտական աշխատանքից: Ուսումնական ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական կրթամասերից.

- ✓ մոդուլներից/դասընթացներից,
- ✓ մասնագիտական պարտադիր դասընթացներ,
- ✓ կամ ընտրական դասընթացներ:

Կրթական ծրագրի գիտահետազոտական կրթամասը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկա,
- գիտահետազոտական աշխատանք մագիստրոսական թեզի թեմայով,
- մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն:

38. Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դասընթաց ունի իր դասիչը: Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր խմբին, ինչպես նաև յուրաքանչյուր մոդուլին հատկացված կրեդիտային միավորը, ինչպես նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

39. «Կրթության կառավարում» ԿԾ-ի մոդուլները կազմված են վերջնարդյունքների հիման վրա, որոնք ձևակերպված են վերհանված կարիքների հիման վրա:

40. Կրթական մոդուլը բաղկացած է առարկայական դասընթացներից, որոնք ապահովում են որոշակի վերջնարդյունք և պետք է ուսումնասիրվեն մեկ կիսամյակի ընթացքում:

41. Մոդուլները ընդգրկում են հիմնական և կամընտրական առարկայական դասընթացներ:

42. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

Կրթական ծրագիրը բաղկացած է 7 մոդուլներից:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄՈԴՈՒԼ 1. Կրթության քաղաքականություն

Հիմնական դասընթաց

Մ-1	Փ/մ 1237	Կրթության կառավարման օրենսդրական հիմքեր	6
Մ-1	Փ/մ 1240	Կրթության փիլիսոփայություն	5
Մ-1	Փ/մ 1241	Կրթության քաղաքականություն և ռազմավարություն	6
Ընդամենը			17
ՄՈՂՈՒԼ 2. Կրթության Որակի ապահովում			
<i>Հիմնական դասընթաց</i>			
Մ-2	Մ/մ 1116	Կրթության որակի ապահովում	6
<i>Կամընտրական դասընթաց</i>			
Մ-2	Հ/մ	Որակի ապահովումը ներառական կրթության մեջ	3
Մ-2		Կրթական համակարգերի հոգեդիդակտիկա	
Մ-2	Փ/մ 1242	Կրթական հմտություններ և գիտելիքի կառավարում	6
		Կրթական ծրագրի մշակում և զարգացում	
Ընդամենը			15
ՄՈՂՈՒԼ 3. Կառավարում			
<i>Հիմնական դասընթաց</i>			
Մ-3	Տ/մ 1274	Ֆինանսների կառավարումը կրթության մեջ	5
Մ-3	Տ/մ 1269	Վիճակագրությունը կրթության մեջ	5
<i>Կամընտրական դասընթաց</i>			
Մ-3	Տ/մ 1273	Բարձրագույն կրթության շուկայագիտություն և կառավարում	5
	Տ/մ 1276	Ինտերնետ շուկայագիտություն	
Ընդամենը			15
ՄՈՂՈՒԼ 4. Համագործակցություն և կառավարում			
<i>Հիմնական դասընթաց</i>			
Մ-4	Փ/մ 1239	Հանրության հետ կապերի կառավարում	5
<i>Կամընտրական դասընթաց</i>			
Մ-4	Հ/մ 1141	Կոնֆլիկտի կառավարում	5
	Հ/մ 1275	Ռիսկերի կառավարումը կրթության մեջ	5

Մ-4	S/մ 1277	Բուհի ֆինանսական միջոցներ և դրամաշնորհներ	5
	Մ/մ 1119	Միջազգային կազմակերպություններ և կրթության զարգացում	5
Ընդամենը			15
ՄՈԴՈՒԼ 5. Կրթության հետազոտության մեթոդաբանություն			
Մ-5	Հ/մ 1142	Հետազոտության մեթոդներ	8
Մ-5	Յ/Մ 1301	Տեղեկատվական տեխնոլոգիաները հետազոտության ոլորտում	5
Ընդամենը			13
ՄՈԴՈՒԼ 6. Առաջնություն և կառավարում			
Հիմնական դասընթաց			
Մ-6	ի/Մ 1270	Մարդկային ռեսուրսների կառավարումը կրթության համակարգում	6
Կամրնտրական դասընթաց			
Մ-6	Փ/մ 1238	Համագործակցային մշակույթ և էթիկա	6
	Հ/մ	Կրթության կառավարման հոգեբանություն	
Մ-6	Մ/մ	Միջանձնային հարաբերություններ և հաղորդակցություն	3
	Հ/մ	Առաջնություն և կրթության վարչարարություն	
Ընդամենը			15
ՄՈԴՈՒԼ 7. Մագիստրոսական թեզ			
Մ-7		Գիտամանկավարժական պրակտիկա	4.5
Մ-7		Գիտահետազոտական պրակտիկա	4.5
Մ-7		Մագիստրոսական թեզ	21
Ընդամենը			30

10. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Հիմնական դասընթացներ

Տվյալ ենթաբաժնի դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ դասընթացները.

Առարկայի կոդը	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Ընդհանուր ժամաքանակ	Լսարանային ժամ (դ/գ/ս)1	Ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ	Կիսամյակ	Փնտհատման ձևը
Փ/մ 1241	Կրթության քաղաքականություն և ռազմավարություն	6	180	24/32/0	124	1	Քննություն
Փ/մ 1240	Կրթության փիլիսոփայություն	5	150	24/8/0	116	1	Քննություն
Փ/մ 1237	Կրթության կառավարման օրենսդրական հիմքեր	6	180	24/32/0	124	1	Քննություն
Հ/մ 1142	Հետազոտության մեթոդներ	8	240	24/64/0	152	1	Քննություն
Ի/մ 1301	Տեղեկատվական տեխնոլոգիաները հետազոտության ոլորտում	5	150	24/24/0	102	1	Ստուգարք
Տ/մ 1269	Վիճակագրությունը կրթության մեջ	5	150	28/12/0	120	2	Քննություն
Տ/մ 1274	Ֆինանսների կառավարումը	5	150	28/12/0	120	2	Քննություն
Փ/մ 1239	Հանրության հետ կապերի կառավարում	5	150	32/8/0	110	2	Քննություն
Մ/մ 1116	Կրթության որակի ապահովում	6	180	24/32/0	124	3	Քննություն
Տ/մ 1270	Մարդկային ռեսուրսների կառավարումը կրթության համակարգում	6	180	24/28/4	124	3	Քննություն

¹դ-դասախոսություն, գ-գործնական պարապ

Կամընրտական դասընթացներ

Պարտադիր մասնագիտական դասընթացների կրթամասի կամընտրական դասընթացների ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ դասընթացները.

Մոդուլ	Առարկայի կոդը	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Ընդհանուր ժամափայտական	Լսարանային ժամ (դ/գ/ա)/1	Ինքնուրույն աշխատանքի ժամափայտական	Կիսամյակ	Գնահատման միջ
Մ-4	S/մ 1277	Բուհ-ի ֆինանսական միջոցներ և դրամաշնորհներ	5	150	28/12/0	120	2	ստուգարք
	Մ/մ 1119	Միջազգային կազմակերպություններ և կրթության զարգացում	5	150	28/12/0	110	2	
Մ-4	Հ/մ 1141	Կոնֆլիկտի կառավարում	5	150	28/12/0	110	2	ստուգարք
	S/մ 1275	Ռիսկերի կառավարում կրթության մեջ	5	150	28/12/0	110	2	
Մ-3	S/մ 1273	Բարձրագույն կրթության շուկայագիտություն և կառավարում	5	150	28/12/0	110	2	ստուգարք
	S/մ 1276	Ինտերնետ շուկայագիտություն	5	150	28/12/0	110	2	
Մ-2	մ/մ	Կրթական ծրագրի մշակում և զարգացում	6	180	24/28/4	124		ստուգարք
	Փ/մ 1242	Կրթական հմտություններ և գիտելիքի կառավարում	6	180	24/28/4	124		
Մ-2	հ/մ	Կրթական համակարգերի հոգեդիդակտիկա	3	90	12/14/2	62		ստուգարք
	հ/մ	Որակի ապահովումը ներառական կրթության մեջ	3	90	12/14/2	62		
Մ-6	Փ/մ 1238	Համագործակցային մշակույթ և էթիկա	6	180	24/28/4	124	4	քննություն
	հ/մ	Կրթության կառավարման հոգեբանություն	6	180	24/28/4	124	4	
Մ-6	Մ-մ 1117	Միջանձնային հարաբերություններ և հաղորդակցություն	3	90	12/14/2	62		ստուգարք
	S/մ 1272	Առաջնորդություն և կրթության վարչարարություն	3	90	12/14/2	62		

Պրակտիկա

Ոչ դասընթացային կրթական մոդուլ՝ ամրագրված կրեդիտային միավորներով.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը	Ընդհանուր ժամաքանակ
Գիտամանկավարժական պրակտիկա	4.5	4	քննություն	135
Գիտահետազոտական պրակտիկա	4.5	4	քննություն	135

Գիտահետազոտական աշխատանք

Մագիստրոսական կրթական ծրագրի գիտահետազոտական հատվածն ընդգրկում է կրեդիտային միավորներով ամրագրված հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Ընդհանուր ժամաքանակ
Մագիստրոսական թեզի նախապաշտպանություն և պաշտպանություն	21	2	630

Ավարտական պահանջներ

Ընդհանուր ավարտական պահանջներ

Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՀ մագիստրատուրայի ուսանողը պետք է հաջողությամբ յուրացնի 90 կրեդիտին համապատասխանող կրթական ծրագրի բոլոր բաղադրիչները, ընդ որում հաշվարկված միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58՝ ներառյալ մագիստրոսական թեզի ձևակերպումը և պաշտպանությունը:

Մասնագիտական ավարտական պահանջներ

«Կրթության կառավարում» մասնագիտությամբ մագիստրատուրայի ուսանողները պարտավոր մասնակցել գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկային (9 կրեդիտ), իրականացնել գիտահետազոտական աշխատանք և պաշտպանել ավարտական թեզ (21 կրեդիտ):

11. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգ

11.1 Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի բաղադրիչներն են՝

բ) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,

գ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության, հմտությունների և կարողությունների հաշվառում և գնահատում,

դ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգումներ),

ե) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

զ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա կրթական մոդուլի արդյունարար գնահատականի ձևավորում:

11.2. ՎՊՀ-ում մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Հավելված 1.

Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի	Գնահատականը ըստ ECTS համակարգի
«գերազանց» (5)	96-100	A+
« գերազանց» (5)	91-95	A
« գերազանց» (5)	86-90	A-
« լավ» (4)	81-85	B+
« լավ» (4)	76-80	B
« լավ» (4)	71-75	B-
« բավարար» (3)	67-70	C+
« բավարար» (3)	62-66	C
« բավարար» (3)	58-61	C-
« անբավարար» (2) ¹	30-57	D
« Անբավարար» (2) ²	մինչև 30	F

« ստուգված»	58-100	S
« չստուգված» ¹	30-57	U
« չստուգված» ²	մինչև 30	U

12. Գնահատման մեթոդաբանությունը

Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատաձևավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացներն ըստ անփոփոխ ստուգման կազմակերպման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) քննությամբ ավարտվող դասընթացներ,

բ) ստուգարքով ավարտվող դասընթացներ :

Տվյալ մասնագիտության դասընթացներից ուսանողների գիտելիքների, մասնագիտական կարողությունների և հմտությունների ստուգման ձևերը ամրագրվում են մասնագիտության ուսումնամեթոդական փաթեթում :

12. Քննություններով ավարտվող առարկաների ցանկը որոշում է տվյալ ֆակուլտետի գիտամանկավարժական խորհուրդը :

13. Քննությամբ ավարտվող դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող հանրագումարային քննության (այսուհետ՝ Հանրագումարային քննություն) հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ քննություն (ըստ աշխատանքային պլանի) : Ընթացիկ քննությունը կամ նրա մի մասը, որպես կանոն, անցկացվում է գրավոր (ուսանողների կամ տվյալ առարկայի դասախոսի հիմնավորված առաջարկությամբ և ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև գրավոր-բանավոր ձևով) :

- Սահմանվում են ընթացիկ քննության առաջադրանքի հետևյալ ձևերը՝ հարցաշար, թեսթ, ստուգողական աշխատանք, վերջիններիս զուգակցում կամ ստեղծագործական աշխատանք :
- Ընթացիկ գրավոր քննության առաջադրանքի առնվազն 8 միավորով գնահատվող հատվածը, որպես կանոն, կազմվում է թեսթային առաջադրանքի տեսքով :
- Հանրագումարային քննության ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր-բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի

¹ Թույլատրվում է մասնակցել քննության պարտքերի մարմանը

² Չի թույլատրվում մասնակցել պարտքերի մարմանը :

ուսումնամեթոդական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին հաջորդ ուսումնական տարվա համար:

14. Ստուգարքով եզրափակվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2-4 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով ամփոփվող ստուգարքով:

15. Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն (գրավոր, բանավոր կամ գրավոր – բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին հաջորդ ուսումնական տարվա համար:

16. Ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների արդյունքների ամփոփման ու ներկայացման ձևը հաստատվում է համապատասխան ամբիոնում: Ուսանողները լաբորատոր աշխատանքները կատարում են տվյալ դասընթացը վարող դասախոսի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ:

17. Քննությամբ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գքնն.) ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրամասերի`

17.1. Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից` Գ1:

17.1.1. Լսարանային պարապմունքներին լիարժեք մասնակցության դեպքում ուսանողը վաստակում է` 5 միավոր - դասախոսություններին հաճախելու համար, իսկ 15 միավոր – գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքներին հաճախելու համար (հավելված 2) :

17.1.2. Լսարանային պարապմունքներին հաճախումները որոշվում են համաձայն հետևյալ հաշվարկի.

$$ՀՄ = Դ + Գ,$$

որտեղ`

ՀՄ – հաճախումներին հատկացվող միավորը

Դ – դասախոսությունների մասնակցությանը միավորը

Գ – գործնական (սեմինար, լաբորատոր) պարապմունքների մասնակցությանը միավորը:

17.1.3. Լսարանային պարապմունքներին 50% և ցածր հաճախումների դեպքում մասնակցության համար միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո) :

17.1.4. Դասընթացի լսարանային պարապմունքների հաճախումների համար հատկացվող միավորը որոշվում է ըստ հաճախումների քանակի և համարժեք տոկոսի (հավելված 2) :

17.1.5. Լսարանային պարապմունքներին և պրակտիկաներին ուսանողների հաճախումները դասամատյանում գրանցում է դասախոսը կամ խմբի (կուրսի) ավագը այդ աշխատանքները վարող դասախոսի (պրակտիկայի ղեկավարի) հսկողությամբ: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խմբի խորհրդատուն ամփոփում է հաճախումների արդյունքները դասամատյանում:

17.1.6. Տվյալ առարկայի դասընթացից անհարգելի բացակայությունների և (կամ) ցածր առաջադիմության դեպքում ուսանողը յուրաքանչյուր ամսվա վերջում ակադեմիական

խորհրդատուի կամ դեկանի կողմից ստանում է նախագուշացում, ինչն ուսանողի ստորագրությամբ գրանցվում է հաշվառման մատյանում:

17.1.7. Տվյալ ամսվա ընթացքում համապատասխան փաստաթղթով վավերացված հարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար դեկանատի գրավոր թույլտվությամբ ամբիոնը կազմակերպում է չկատարած լաբորատոր աշխատանքների անցկացում և գործնական (սեմինար) աշխատանքների խորհրդատվություն: Այդ դասաժամերին ուսանողների մասնակցության դրական արդյունքների դեպքում բացթողումները համարվում են լրացված:

17.1.8. Կիսամյակում դասընթացի լսարանային պարապմունքների մասնակցությանը համապատասխան միավորը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

17.2. Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից` Գ2, որին հատկացվում է 10 միավոր:

17.2. 1. Ինքնուրույն աշխատանքի ձևերից են` ռեֆերատը, անհատական տնային առաջադրանքները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը, թեմատիկ զեկուցումների նախապատրաստումը և այլն:

17.2. 2. Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից կարող են հանձնարարվել առնվազն 2 անհատական առաջադրանքներ:

17.2. 3. Եթե ինքնուրույն աշխատանքը (անհատական առաջադրանքը) նշանակված ժամանակահատվածում կատարված է առնվազն կիսով չափ և ուսանողը կարողանում է այն ներկայացնել, ապա աշխատանքը գնահատվում է դրական (8-20 միավոր):

17.2. 4. Բոլոր առաջադրանքների դրական գնահատականների միջինի դեպքում (8-20 միավոր) ուսանողը ստանում է ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված 10 միավորը: Հակառակ դեպքում ուսանողն ինքնուրույն աշխատանքի համար միավոր չի վաստակում (տեղեկագրում գրվում է զրո):

17.2. 5. Ինքնուրույն աշխատանքի (անհատական առաջադրանքների) գնահատականները նշանակվում են մատյանում և տեղեկագրում:

17.3. Գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքների անցկացմանն ուսանողի մասնակցությունից և պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունից (Գ3), որը գնահատվում է 20 միավորով:

17.3. 1. Նշված պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են, որոնց անցկացմանը ուսանողի մասնակցությունը և ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է դասամատյանում:

17.3. 2. Կիսամյակում դասընթացի գործնական (սեմինար) ու լաբորատոր աշխատանքներին ուսանողների մասնակցության և ակտիվության գնահատման արդյունքների միջինը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

17.3. 3. Դրական (8 և ավելի) գնահատականների միջինի դեպքում ամփոփիչ գնահատման տեղեկագրում ուսանողին տրվում է 20 միավոր, իսկ 8-ից ցածր արդյունքի դեպքում միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):

17.4. Ուսուցանվող նյութի` ուսանողի կողմից տեսության յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ դրական (8 և բարձր) գնահատված քննությունների

միջին գնահատականի կամ քննության ընթացքում այդ միջինի բարձրացված արդյունքից (Գ4) :

17.4.1. Ընթացիկ քննությունների դրական գնահատականների միջինը հաշվի է առնվում, եթե ուսանողի գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատված են դրական :

17.4.2. Տվյալ դասընթացի ընթացիկ քննություն (ներ) ից 8-ից ցածր միավոր ստացած կամ ընթացիկ քննությանը չներկայացած ուսանողը հնարավորություն է ստանում այն (վերա) հանձնելու հանրագումարային քննության օրվան նախորդող աշխատանքային օրվա ընթացքում :

17.4.3. Բանավոր քննության թույլատրվում են այն ուսանողները, որոնք գրաֆիկով նշանակված ժամկետներում դրական գնահատականներով հանձնել են տվյալ դասընթացի ընթացիկ քննությունները և ակնկալում են դրական գնահատված մասերի համապատասխան գնահատականի բարձրացում (հանրագումարային քննության նախորդ օրը ընթացիկ քննություն (ներ) ը հանձնած ուսանողը հանրագումարային քննության չի թույլատրվում) :

17.4.4. Քննությունները գնահատվում են առավելագույնը 20 միավորով : Վերջնական գնահատման ժամանակ քննությունների գնահատականը կլորացվում է :

17.4.5. Ընթացիկ և հանրագումարային քննությունների արդյունքները գրանցվում են քննությունների տեղեկագրում :

17.5. Ուսանողի՝ գիտելիքների կիրառության գործնական հմտություններից (Գ5), որը գնահատվում է 1-10 միավորներով, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են 11-20 միավորներով, դրական և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական (կախված դասընթացի բնույթից՝ ամբիոնի որոշմամբ, առաջնայինը կարող է լինել ինքնուրույն կատարվող աշխատանքների 11-20 միավորը) :

17.5.1. 10 -ից բարձր գնահատականի դեպքում գործնական կարողությունների համար տրվում է 10-ը գերազանցող միավորներին հավասար միավոր :

17.6. Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման արդյունքում ուսանողի ձեռք բերած կարողությունների գնահատումից (Գ6), որին հատկացվում է առավելագույնը 20 միավոր :

17.6.1. Ուսանողի ձեռք բերած կարողությունները գնահատվում են 8-20 միավորներով/քննության միավորին համարժեք/, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատվել են դրական և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական :

18. Դասընթացի (կրթական մոդուլի) հանրագումարային միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գքնն = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

19. Ստուգաբքով ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած հանրագումարային/կիսամյակային միավորը (գնահատականը) (Գստ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

19.1. դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ1, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր:

19.2. ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ2, որին հատկացվում է 10 միավոր:

19.3. գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունից և ակտիվությունից (Գ3), որին տրվում է 20 միավոր:

19.4. ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի ստուգման, ձեռքբերված գործնական հմտությունների ու կարողությունների գնահատման նպատակով անցկացվող 2-4 ընթացիկ ստուգումների դրական գնահատականների (8 և բարձր) արդյունքների միջին գնահատականից (Գ4) :

19.4.1. Ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 20 բալանոց համակարգով: Ստուգման արդյունքները գրանցվում են ստուգարքների տեղեկագրում:

19.5. Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտությունների (Գ5) և կարողությունների (Գ6) գնահատումից: Այս դեպքում նորից հմտություններն ու կարողությունները արժևորվում են տեսական և գործնական գիտելիքների դրական գնահատման դեպքում :

20. Դասընթացի (կրթական մոդուլի) ընդհանուր միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{ստ.} = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

21. Ընթացիկ քննություններից կամ ստուգումներից չառաջադիմող ուսանողների հետ ամբիոնները պարտավոր են անցկացնել լրացուցիչ և (կամ) անհատական պարապմունքներ՝ ըստ ժամանակացույցի:

22. Կուրսային աշխատանքի կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է «ՎՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգերով:

23. Պրակտիկական գնահատվում է քննության ձևով՝ 100 միավորանոց սանդղակով՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի կողմից սահմանված չափանիշների: Ուսումնական կամ արտադրական պրակտիկականների կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է «Պրակտիկայի կազմակերպման կանոնակարգերով:

24. Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման մասին կարգի (հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանով) :

13. Կիրարկման ընթացակարգը

25. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեսթային կամ այլ

առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում): Գրավոր ստուգման տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (ընթացիկ քննության համար՝ առնվազն 120 րոպե): Ընթացիկ քննության հարցատոմսը պետք է պարունակի առնվազն 8-միավորանոց թեստային առաջադրանք:

26. Ընթացիկ քննությունների ու ստուգումների, ստուգարքների ու քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

27. Արգելվում է առանց ռեկտորատի թույլտվության և ուսանողների համաձայնության քննության վաղաժամկետ ընդունումը կամ հետաձգումը:

28. Ընթացիկ քննություններն անցկացվում են ըստ հաստատված ժամանակացույցի:

29. Ընթացիկ քննության օրերին ուսանողներն ազատվում են այդ օրվա դասերից:

30. Ստուգարքով ավարտվող առարկայի ընթացիկ ստուգումներն անցկացվում են ստուգումների թվով համամասնորեն բաժանված ժամանակահատվածներում: Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):

31. Ընթացիկ քննության կամ ստուգման քննարկումն անցկացվում է դասերից հետո՝ անհատական աշխատանքների համար նախատեսված ժամերի շրջանակում՝ առարկան դասավանդող դասախոսի կամ ամբիոնի որոշմամբ՝ նույն առարկան դասավանդող այլ դասախոսի կողմից՝ ստուգմանը հաջորդող աշխատանքային երկու օրվա ընթացքում:

32. Գրավոր ստուգման արդյունքները վերջնական ամփոփումից հետո գրանցվում են համապատասխան տեղեկագրում (արդյունքները փակցվում են ի տես բոլորի):

33. Հետագա մեկ օրվա ընթացքում ուսանողն իրավունք ունի որոշակի հարց(եր)ի գնահատումը բողոքարկելու նպատակով գրավոր դիմելու դեկանին, որը համապատասխան ամբիոնի վարիչի հետ կազմակերպում է բողոքի քննարկումը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

34. Քննարկման արդյունքի մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է տեղեկագրին:

35. Ընթացիկ կամ հանրագումարային ստուգմանը (ստուգարքին, քննությանը) դասախոսի բացակայության դեպքում ստուգումն իրականացվում է դեկանի գրավոր կարգադրությամբ՝ ըստ ամբիոնի վարիչի առաջարկի (այլ դասախոսի կամ հանձնաժողով):

36. Ընթացիկ ստուգումից բացակայության դեպքում լրացուցիչ ստուգում չի կազմակերպվում և տեղեկագրում գրանցվում է «չներկայացած»: Ուսանողը այն վերահանձնում է ստուգարքների համար նախատեսված շաբաթվա ընթացքում:

14. Ստուգարքների ամփոփումը

37. Ստուգարքներն ամփոփվում են յուրաքանչյուր «կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:

38. Ուսումնական պարապմունքների նախավերջին շաբաթվա ընթացքում իրականացվում է բաց թողնված դասերի լրացում: Նախավերջին շաբաթում, ըստ հաստատված ժամանակացույցի, լրացվում են բաց թողած լաբորատոր, գործնական սեմինար պարապմունքները:

39. Եթե ուսանողը հանձնել է բոլոր ընթացիկ ստուգումները և ունի 58 կամ ավելի միավոր, ապա տվյալ առարկայի ստուգարքը համարվում է հանձնված:

40. 0-57 միավորների դեպքում ուսանողը գնահատվում է «Չստուգված»:

15. Քննությունների անցկացումը

41. Քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 19-րդ շաբաթներում՝ ըստ հաստատված ժամանակացույցի:

42. Քննությունների անցկացման ժամանակացույցը՝ ուսանողական խմբերի առաջադրմամբ, կազմվում է դեկանատներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից քննաշրջանը սկսվելուց մեկ ամիս առաջ:

43. Քննություններն անցկացվում են հարցատոմսերով, թեստերով, որոնք հաստատվում են ամբիոնի նիստում քննաշրջանից մեկ ամիս առաջ:

44. Քննությունները կարող են կազմակերպվել համակարգչային տեխնիկայի միջոցով:

45. Քննության ընթացքում տվյալ դասընթացից խնդիրներ կամ այլ գործնական առաջադրանքներ տալու դեպքում դասախոսը պարտավոր է ուսանողներին ապահովել խնդրագրքերով, առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատու ձեռնարկներով:

46. Կրթական յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին, և հարցատոմսերն ընդգրկում են միայն տվյալ կիսամյակում դասավանդված թեմաները:

47. Բանավոր քննության ընթացքում ստացած գնահատականին ուսանողի անհամաձայնության դեպքում ուսանողը քննասենյակում հայտարարում է, որ համաձայն չէ իր գնահատականին և անմիջապես այդ մասին գրավոր դիմում է դեկանին, որն էլ համապատասխան ամբիոնի վարիչի (անհրաժեշտության դեպքում նաև քննությունները վերահսկող հանձնաժողովի ներկայացուցչի) հետ կազմակերպում է քննության քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն՝ գնահատականը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ:

48. Տվյալ առարկայից դրական գնահատական (58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:

49. Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:

50. Ուսումնական վարչության և դեկանի կողմից հաստատված տեղեկագիրը դեկանը տրամադրում է դասախոսին ստուգման օրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.

51. «Քննության չի թույլատրված» (թանաքով), այն ուսանողների անվան դիմաց, որոնք քննաշրջանին կամ տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն.

52. Բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և «Փոխանցվում է» գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:

53. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում:

Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

54. Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:

55. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

16. Գնահատման սանդղակը և նշագրումը

56. ՎՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 1-ում:

57. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:

58. Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.

18-20 միավորները համարվում են դրական գնահատական

7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):

59. Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում:

17. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

60. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման

պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

61. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

62. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը

գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը

վարկանիշային միավորները (ՎՄ)

միջին որակական գնահատականը (ՄՈԳ) :

63. Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

64. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$\text{ԳԿ} = \sum (\text{Կրեդիտ})$$

65. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ}),$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է $5 \text{ կրեդիտ} \times 72 = 360$ 500 հնարավորից:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված նահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ) .

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / (\sum \text{ԳԿ})$$

66. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

67. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

68. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ՝ մեկ կիսամյակի համար) :

69. 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն :

18. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

70. Դրական գնահատված դասընթացի քննության (ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում :

71. Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի՝ քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Համալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում :

72. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունաբար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին :

73. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ : Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան՝ ըստ ժամանակացույցի :

74. Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց :

75. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից :

19. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը

76. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում :

77. Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս :

78. Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ («գերազանց» գնահատականներ) :

79. Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և Համալսարանի գիտխորհրդի նիստերում:

20. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը

80. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

81. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

82. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ներ)ի պատասխան(ներ)ը:

83. Քննության կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

85. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ռեկտորին կան ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման մասին որոշումը կայացվում է Համալսարանի ղեկավարության և դեկանի կողմից:

Հավելված 2.

Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները և համարժեք տոկոսները

Մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը	
	Դասախոսություն	Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք
96-100	5	15
91-95	5	15
86-90	4	14
81-85	4	14
76-80	3	13
71-75	3	13
66-70	2	12

61-65	2	12
56-60	1	11
51-55	1	11
0-50	0	0

21. Ծրագրի եզրափակիչ ատեստավորում

21.1. Մագիստրատուրայի ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական թեզի) կատարումով ու պաշտպանությամբ:

21.2. Մագիստրոսական թեզով նախատեսված աշխատանքները կատարվում են ուսումնառության 4 կիսամյակներում՝ ստացված գիտելիքների և գործնական հմտությունների հիման վրա: Մագիստրոսական ատենախոսության թեմաները առաջարկում են թողարկող ամբիոնի կողմից և որոշվում ուսանողի ընտրությամբ, համաձայնեցնելով ղեկավարների հետ:

Մագիստրատուրայի ուսանողը երրորդ կիսամյակի սկզբում գրավոր դիմում է համապատասխան թողարկող ամբիոնի վարիչին՝ մագիստրոսական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման խնդրանքով:

21.3. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) թեզի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) թեզի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ) մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքի գրախոսման կազմակերպում,

դ) մագիստրոսական թեզի պաշտպանությունն պետական քննական հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

21.4. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը գնահատվում է 100-բալանոց սանդղակով:

21.5. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման հետևյալ միավորները.

Թիվ	Չափանիշ	Հատկացվող առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	30
2	Ձևակերպման որակը	20

3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	30
4	Արդիականությունը (նորույթը)	20
	Ընդամենը	100

22. Կրեդիտների փոխանցում

22.1. Այլ բուհերից ՎՊՀ-ի մագիստրատուրայի կրթական ծրագիր փոխադրվելու դեպքում փոխանցելի են տվյալ բուհում առանձին դասընթացներից, դասընթացների խմբից, կամ ուսումնառության որոշակի շրջանից կուտակված կրեդիտները: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ և ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

22.2. Այլ ուսումնական ծրագրից ՎՊՀ մագիստրոսի ուսումնական ծրագիր կրեդիտների փոխանցումը հնարավոր է, եթե.

- ա) փոխանցվող կրեդիտները կուտակվել են ՎՊՀ մագիստրոսական ծրագրի բաղադրիչներին համապատասխանող դասընթացներից և այլ կրթական մոդուլներից,
- բ) կան կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային ոչ էական տարբերություններ,
- գ) առկա են կուտակված կրեդիտներին համապատասխանող կրթական ծրագրերի բաղադրամասերի բովանդակային տարբերություններ, սակայն վերջնարդյունքները համարժեք են:

22.3. Այլ բուհում ՎՊՀ մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՎՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

22.4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման հարցերով զբաղվում է ՎՊՀ-ի ուսումնամեթոդական վարչությունը:

23. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի պարտականությունները

1. Կրեդիտային համակարգով մագիստրատուրայում սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը նշանակում է մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներից:

2. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը պատասխանատու է մագիստրոսի պատրաստման որակի համար:

3. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը վերահսկում է մագիստրոսական ուսումնական պլանի մշակումը, մասնակցում է դրա մասնագիտական առարկայախմբի բովանդակության

ձևավորմանը, վարում է ուսումնական պլանով նախատեսված մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարը, անցկացնում է այդ սեմինարի պլանին և ծրագրին համապատասխանող ուսումնական պարապմունքներ, վերահսկում է մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքի կատարումը:

4. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը իրականացնում է մագիստրոսական ծրագրի ուսումնական և գիտահետազոտական հատվածների կատարման և մագիստրատուրայի գիտական ղեկավարների գործունեության վերահսկողությունը, կազմակերպում է մագիստրոսական ատենախոսությունների թեմաների փորձաքննական գնահատում:

5. Մագիստրոսական ծրագրի ղեկավարը ներկայացնում է ուսանողի շահերը տարբեր ստորաբաժանումներում, կազմակերպում է խմբային և անհատական խորհրդատություններ ուսանողների համար՝ ուսումնական գործընթացին վերաբերող տարբեր հարցերի շուրջ:

24. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

24.1. Մագիստրատուրայի ուսանողը պարտավոր է.

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

24.2. Ուսանողն իրավունք ունի.

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) սովորելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի ECTS հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրքի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Կրթության կառավարում» մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հասարակությանը մատչելի դարձնելու համար: Տեղեկագիրքը պարունակում է ամփոփ տեղեկատվություն կրթական ծրագրերի, բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված էլքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

080200 «Կրթության կառավարում» մասնագիտության մագիստրոսական ծրագրի տեղեկագիրք

Մոդուլ 1. Կրթության քաղաքականություն

Փ/մ 1241 Կրթության քաղաքականություն և ռազմավարություն – (6 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիք, հմտություններ և կարողություններ կրթության քաղաքականության և ռազմավարության վերաբերյալ, ինչը կնպաստի ընդհանուր կրթական համակարգի և հատկապես հանրակրթության և բարձրագույն կրթության շրջանակների արդյունավետ կառավարմանը, կշաղկապի վերջին երկու օղակները:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- ✓ Կրթության և քաղաքականության ռազմավարության վերաբերյալ,
- ✓ Կրթության կառավարման օրենսդրության դաշտի վերաբերյալ,
- ✓ Կրթական քաղաքականության ռազմավարության փուլերի իրականացման վերաբերյալ

Կարողություն

- ✓ Պրակտիկայում կիրառել կրթության կառավարման չափորոշիչները,
- ✓ Կիրառել ձեռք բերված գիտելիքները կարիքների բացահայտման նպատակով,
- ✓ Կազմակերպել և իրականացնել մոնիթորինգ,

Հմտություններ

- ✓ Վերլուծել կրթության քաղաքականության և ռազմավարության չափորոշիչները,
- ✓ Վերլուծել կրթության կառավարման տարբեր մոդելները,

Կիրառել ստացված գիտելիքները կրթության կառավարման և կատարելագործման գործընթացում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կրթության քաղաքականության և ռազմավարության նպատակներն ու խնդիրները:

Թեմա 2. Կրթության քաղաքականության բարեփոխումների ռազմավարությունը անցումային շրջանի հասարակություններում: *Թեմա 3.* Կրթության քաղաքականության օրենսդրական հիմքերը: *Թեմա 4.* Կրթության քաղաքականություն իրականացնող մարմիններ: *Թեմա 5.*

Կրթության Եվրոպական տարածք. Բոլոնիայի գործընթաց: *Թեմա 6.* Հանրակրթություն և բարձրագույն կրթություն : *Թեմա 7.* Կրթության գործընթացն իրականացնող սուբյեկտներ: *Թեմա 8.* Դասավանդման նորագույն մեթոդներ և տեխնոլոգիաներ: *Թեմա 9.* Բուհական և հետբուհական կրթության սկզբունքները: *Թեմա 10.* Կրթություն և գիտելիք, կարողություն և հմտություն:

Փ/մ 1237 Կրթության կառավարման օրենսդրական հիմքեր - (6 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիքներ հանրակրթության բնագավառի, ժողովրդավարական կառավարման սկզբունքների, ընթացիկ գործունեության ղեկավարման, կոլեգիալ կառավարման մարմինների կազմակերպման և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ: Ինչպես նաև անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ ստեղծագործական աշխատանքի խթանման, ուսանողների վերլուծական, քննադատական մտածողության, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և կիրառելու ունակությունների զարգացման համար:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Կրթական քաղաքականության ռազմավարության վերաբերյալ:
- Ուսումնական հաստատությունների կառավարման օրենսդրության վերաբերյալ:
- Ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերի, դրանց նմանությունների ու տարբերությունների վերաբերյալ:

Կարողություն

- Գործնականում կիրառել ուսումնական գործընթացի կառավարման արդի սկզբունքները:
- Հանրակրթության գործընթացի կարիքները բացահայտելու համար իրացնել ձեռք բերած գիտելիքները:

- Կազմակերպել ուսումնական հաստատության գործունեության վերահսկողություն:
- Իրականացնել ուսումնական հաստատության գործունեության գնահատում:

Հմտություններ

- Վերհանել ու վերլուծել հանրակրթական հաստատությունների կառավարման ժամանակակից մոտեցումները:

Դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները կիրառել ուսումնական հաստատության հետագա կառավարման ու ղեկավարման գործընթացում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ուսումնական հաստատությունների կառավարման իրավունքի աղբյուրները: *Թեմա*

2. Հանրակրթության բնագավառում ՀՀ կառավարության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի լիազորությունները: Հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները: *Թեմա 3.* Ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությունը և գնահատումը:

Թեմա 4. Ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերը:

Ուսումնական հաստատության կառավարումը: *Թեմա 5.* Ուսումնական հաստատության սնօրենը և նրա իրավասությունները: Պետական ուսումնական հաստատության խորհրդի լիազորությունները և դրանց դադարեցման հիմքերը: *Թեմա 6.* Եվրոխորհրդի իրավական-օրենսդրական փաստաթղթերը: *Թեմա 7.* ՀՀ օրենսդրության բարձրագույն կրթության բնագավառում: Հիմնական փաստաթղթեր:

Փ/մ 1240 Կրթության փիլիսոփայություն -(5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիք, հմտություններ և կարողություններ կրթության փիլիսոփայության վերաբերյալ, ինչը կնպաստի կրթական տարբեր մոդելների վերաբերյալ տեսամեթոդական մտքի զարգացմանը, ընդհանուր կրթական համակարգի և հատկապես հանրակրթության և բարձրագույն կրթության շրջանակների արդյունավետ կառավարմանը, կշաղկապի վերջին երկու օղակները:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Կրթության փիլիսոփայության վերաբերյալ,
- Կրթության արժեքաբանական և նպատակաբանական խնդիրների վերաբերյալ,
- Ժամանակակից կրթության պարադոքսների վերաբերյալ

Կարողություն

- Պրակտիկայում կիրառել կրթության տարբեր մոդելներում կիրառվող ձևաչափերը,
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները կարիքների բացահայտման նպատակով,
- Իրականացնել կրթական համակարգերի համեմատական վերլուծություններ,
- Իրականացնել ուսումնական հաստատության ինքնավերլուծությունը

Հմտություններ

- Վերլուծել կրթական համակարգում առկա բացթողումները
- Վերլուծել կրթության կառավարման տարբեր մոդելները,

Կիրառել ստացված գիտելիքները կրթության կառավարման և կատարելագործման գործընթացում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կրթության փիլիսոփայության առարկան և խնդիրները: Ժամանակակից կրթության զարգացման հիմնական ուղղությունները: *Թեմա 2.* Անտիկ պայդեան որպես ունիվերսալ կրթության հասկացություն: *Թեմա 3.* Կրթական գործընթացի փիլիսոփայական-անտրոպոլոգիական հիմնավորումը: *Թեմա 4.* Կրթությունը որպես մշակութային երևույթ և սոցիալական ինստիտուտ: *Թեմա 5.* Կրթության արժեքաբանական -նպատակաբանական խնդիրները: *Թեմա 6.* Կրթության հիմնարար խնդիրները Եվրոպական փիլիսոփայության համատեքստում: *Թեմա 7.* Իննովացիոն կրթություն և իննովացիոն հասարակություն: *Թեմա 8.* Կրթության փիլիսոփայության խնդիրները Արևելքում և Արևմուտքում: *Թեմա 9.* Գենդերային խնդիրները և կրթությունը: *Թեմա 10.* Եվրոպական կրթության սոցիալ-մշակութային տիպերի դինամիկան: *Թեմա 11.* Կրթության ճգնաժամի պատճառները: *Թեմա 12.* Ժամանակակից կրթության պարադոքսները: *Թեմա 13.* Կրթական բարեփոխումներ: *Թեմա 14.* Կրթություն և տեխնիկա: *Թեմա 15.* Հայաստանի կրթական համակարգը անցումային: *Թեմա 16.* Կրթության արտադրական (տեխնոլոգիական) մոդելի էությունը: *Թեմա 17.* Դեկավարում (Governance) և կառավարում(Management):

Մոդուլ 2. Կրթության որակի ապահովում

Մ/մ 1116 Կրթության որակի ապահովում -(6 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիք, հմտություններ և կարողություններ կրթության որակի ապահովման վերաբերյալ, որը և կնպաստի կրթական համակարգի, այն է՝ բարձրագույն մասնագիտական կրթության և հանրակրթական դպրոցների արդյունավետ կառավարմանը:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- խորացված գիտելիքներ կրթության որակի ապահովման ոլորտի վերաբերյալ
- խորացված գիտելիքներ որակի ապահովման ներդրման մեթոդաբանության վերաբերյալ

Կարողություն

- Կիրառել որակի ապահովման չափանիշեր ռազմավարական նպատակների իրականացման համար

- Մշակել և իրականացնել հետազոտություն բարձրագույն կրթության կառավարման բնագավառում
- Հավաքել տվյալներ, մեկնաբանել, ներկայացնել դրանք կիրառության որոշակի գործիքներ և մեթոդներ

Հմտություններ

- Վերլուծել որակի ապահովման չափանիշերը և չափորոշիչները
- Վերլուծել որակի կառավարման մոդելներ

Կիրառել ստացված գիտելիքները որակի ապահովման կատարելագործման գործընթացում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: Կրթության որակի ապահովում` հիմնական հասկացություններ: *Թեմա 2.* Որակի ապահովումը որպես բուհի կառավարման գործիք: *Թեմա 3.* Որակի ներքին ապահովումը, կրթական հաստատության ռազմավարությունը: *Թեմա 4.* Առաքելությունը որպես հաստատության գործունեության տիրույթ: *Թեմա 5.* Չափորոշիչ և չափանիշ հասկացությունները, դրանց մեկնաբանությունները: Որակյալ կրթության հիմնական տարրերը` հանրակրթական կրթության բարձրագույն ուսումնական հաստատություն: *Թեմա 6.* Որակի ապահովման հիմնական չափորոշիչների դասերը և դրանց չափանիշերը. առաքելություն և նպատակներ, կառավարում և վարչարարություն, որակի ներքին ապահովման համակարգ, արտաքին կապեր և միջազգայնացում, մասնագիտության կրթական ծրագիր, դասախոսական կազմ և այլն: *Թեմա 7* Որակի ներքին ապահովումը, կրթական հաստատության ռազմավարությունը *Թեմա 8* Կրթության որակի ներքին ապահովման չափանիշերը և չափորոշիչները *Թեմա 9* Որակի ապահովման հիմնական չափորոշիչների դասերը և դրանց չափանիշերը, *Թեմա 10* Գործընթացի որակի ապահովում *Թեմա 10* Կրթության որակի արտաքին ապահովման չափանիշերը և չափորոշիչները *Թեմա 11* Հաստատության ինքնավերլուծություն: *Թեմա 12* Հավատարմագրման գործընթացի նախապատրաստում:

Կրթական համակարգերի հոգեդիդակտիկա -(3 կրեդիտ)

Շաբաթական ժամ (12 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ծանոթացնել.

1. Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների հոգեբանական առանձնահատկություններին,
2. բացահայտել և իմաստավորել կրթության հոգեբանության այն հիմնախնդիրները, որոնք հնարավորություն կտան նրանց կողմնորոշվել կրթական միջավայրում և արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

Մագիստրանտները ունեն համապատասխան տեսական գիտելիքներ ժամանակակից կրթական միջավայրի և կրթական համակարգերի հոգեդիդակտիկայի, նրանց կազմակերպման սկզբունքների վերաբերյալ

Հմտություն

Կարողանում են կրթության համակարգում կիրառել զարգացնող ուսուցման տարբեր տեխնոլոգիաներ, հաշվի առնելով կրթական միջավայրի առանձնահատկությունները: Կարողանում են ստեղծել համապատասխան կրթական միջավայր և հիմնավորել զարգացնող ուսուցման տարբեր տեխնոլոգիաներ կիրառման անհրաժեշտությունը:

Կարողություններ

Մագիստրանտները կարող են տարբերել կրթական միջավայրի և կրթական համակարգերի հոգեդիդակտիկան կրթական կառավարման գործընթացի արդյունավետության նպատակով:

Կոմպետենցիա

Կարողանում են ուշադրություն դարձնել ուսումնառողի գիտակցության զարգացման վրա, ընդունելով այն որպես հոգեկանի դրսևորման միջոց, որի շնորհիվ արտահայտվում է նրա վերաբերմունքը արտաքին միջավայրի, այլ մարդկանց և ինքն իր նկատմամբ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կրթական համակարգը և հասարակության պահանջները: Նոր կրթական համակարգերի առաջացման վրա ազդող գործոնները: Կրթական համակարգը և հասարակության պահանջները: Կրթական համակարգը և դպրոցը: Կրթական համակարգի ախտորոշման խնդիրները: Դիֆերենցիալ հոգեբանության խնդիրները դպրոցում: *Թեմա 2.* Կրթության բարեփոխումները և կրթական միջավայրը: Կրթական համակարգի ռազմավարության առանձնահատկությունները խորհրդային միությունում XX դարի սկզբում և վերջում: Կրթության ռազմավարության փոփոխությունը կապված զարգացման կողմնորոշման փոփոխության հետ: *Թեմա 3.* Կրթական համակարգի կառավարման տարբեր մոդելներ: Ավանդական և զարգացնող ուսուցման առանձնահատկությունները: *Թեմա 4.* Զարգացնող ուսուցում և զարգացնող կրթություն: Ժամանակակից կրթության համակարգի նպատակների փոփոխությունը: Ընդունակությունների զարգացման վերաբերյալ կարծիքների փոփոխությունը: Կրթական հիմնախնդիրների փոփոխությունը՝ ավանդական ուսուցումից դեպի զարգացնող կրթությունը: Ավանդական ուսուցման առանձնահատկություններ: Անձնային կողմնորոշված ուսուցում: Զարգացնող ուսուցում: Կրթական համակարգի «սուբյեկտ» հասկացության փոփոխությունը: *Թեմա 5.* Զարգացնող ուսուցումը և նրա ախտորոշումը: Անհատական առանձնահատկությունները և դրանց դրսևորումը կառավարման մեջ: Խառնվածքը, բնավորությունը, ընդունակությունները: *Թեմա 6.* Զարգացնող կրթության դիդակտիկական, հոգեբանական, հոգեդիդակտիկական և հոգեախտորոշական կողմերը: *Թեմա 7.* Կրթական համակարգերի հոգեդիդակտիկա: Լ.Ս.Վիգոտսկու միջավայրի տեսությունը և նրա քննադատությունը Ա.Ն.Լեոնտևի կողմից: Կրթական միջավայրը որպես սոցիոմշակութային միջավայր: Կրթական միջավայրի հիմնական մոդելները: Էկոլոգիական - անձնական մոդել: Կոմունիկատիվ – կողմնորոշիչ մոդել: Մարդաբանական- հոգեբանական մոդել: Կրթական համակարգի դիֆերենցացիայի (տարբերակման) և անհատականացման հոգեախտորոշման մոդել: Էկոհոգեբանական մոտեցում և կրթական միջավայրի մոդել: Կրթական համակարգի լարվածության հիմնախնդիրը: Կրթական միջավայրը հոգեախտորոշման տեսանկյունից: *Թեմա 8.* Կրթական համակարգերի պրոեկտում: Կրթական համակարգերի հոգեախտորոշումը. հիմնական հասկացությունները: Կրթական համակարգերի պրոեկտման և էքսպերտիզայի

հոգեախտորոշման կողմերը: Հոգեբանա-մանկավարժական էքսպերտիզային ներկայացվող պահանջները: Էքսպերտիզայի օբյեկտը և առարկան: Կրթական միջավայրի հոգեբանական ախտորոշումը հանրակրթական դպրոցներում: Կրթական միջավայրի էքսպերտիզան վեկտորային մոդելավորման մեթոդիկայի միջոցով: «Դպրոցի հոգեբանական միջավայրի անվտանգության հոգեբանական ախտորոշման» մեթոդիկայի մասին: Կրթական տեխնոլոգիաների և համակարգերի հոգեդիդակտիկական սխեմայի պրոեկտումը և էքսպերտիզան: *Թեմա 9.* Կրթության կառավարումը և կրթական միջավայրի անվտանգությունը: Կրթական միջավայրի էքսպերտիզան վեկտորային մոդելավորման մեթոդիկայի միջոցով: «Դպրոցի հոգեբանական միջավայրի անվտանգության հոգեբանական ախտորոշման» մեթոդիկայի մասին: Կրթական տեխնոլոգիաների և համակարգերի հոգեդիդակտիկական սխեմայի պրոեկտումը և էքսպերտիզան: *Թեմա 10.* Կրթական համակարգի հոգեդիդակտիկական հոգեբանական հիմնախնդրի տեսանկյունից: Օժտվածությունը որպես ժամանակակից կրթության հիմնախնդիր. նրա դրսևորումները, երեխայի կրթության և զարգացման առանձնահատկությունները: Կոնցեպտուալ տարբեր կրթական մոդելների կառուցումը տարբեր աստիճանի օժտված երեխաների համար: Օժտվածությունը որպես հոգեկանի իրականություն և կրթությունը որպես օժտվածության առաջացման և զարգացման միջավայր: Օժտված երեխաները և ուսուցիչը: *Թեմա 11.* Ուսանողի և երեխայի հոգեբանական վիճակը կրթական միջավայրում, դրանց կառավարման առանձնահատկությունները: Հոգեկան վիճակը որպես հոգեբանության օբյեկտ: Երեխայի հոգեբանական վիճակը լարված կրթական միջավայրում: Երեխայի նյարդա- հոգեբանական լարվածությունը և աշակերտի նյարդային գերլարվածությունը: Էքստրեմալ իրադրությունները: Մանկավարժության մեջ հոգեկան վիճակների կամաժին կարգավորման մեթոդիկայի վերաբերյալ: Ռելակսացիոն վիճակների կառուցվածքը, ֆունկցիաները և մեխանիզմները: Ուսումնական գործունեության կարգավորող-ճանաչողական կառուցվածքի հոգեախտորոշումը որպես կրթական միջավայրի լարվածության հաղթահարման միջոց: Աշակերտների ընդհանրացված – տիպաբանական բնութագիրը ըստ խմբերի: *Թեմա 12.* Կրթական համակարգերի հոգեդիդակտիկայի գործնական կողմերը : Անձնավորության ձևավորման կոմպլեքսային կենտրոնը որպես զարգացնող կրթության սուբյեկտ: *Թեմա 13.* Կրթական միջավայրի հոգեդիդակտիկական: Կրթական միջավայրի կառավարումը: Դիֆերենցիացիայից և անհատականացումից դեպի զարգացնող ուսուցումը և կրթական համակարգերի պրոեկտումը: Անձնային-արժեքավոր մոտեղումը զարգացնող ուսուցման նկատմամբ: Մանկավարժի մասնագիտական կրթությունը և ինքնակրթությունը:

Փ/մ 1242 Կրթական հմտություններ և գիտելիքի կառավարում - (6 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

- օգնել ուսանողին անաչառորեն գնահատել սեփական կարողությունները և ներդնել դրանք կրթական գործընթացում.
- ներկայացնել արդյունավետ ուսումնառության կոնկրետ մեթոդներ.
- այդ մեթոդների կիրառությամբ զարգացնել ուսանողի կրթական հմտությունները.

ուղղորդել ուսանողին կրթական հմտությունների միջոցով արդյունավետ կառավարել, իրացնել գիտելիքը:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- ուսումնառության այն մեթոդները, որոնք շեշտադրում և ապահովում են ուսանողի առավելագույն ներգրավվածությունը կրթական գործընթացում.
- ուսումնառության տարբեր մեթոդների առավելությունները և թերությունները.
- ինչպես զարգացնել կրթական հմտություններ.

Կարողություն

- անաչառորեն գնահատել սեփական կարողությունները.
- մշակել արդյունավետ ուսումնառության անհատական մեթոդներ.
- այդ մեթոդները ներդնել կրթական գործընթացում.

կառավարել և արդյունավետ կիրառել գիտելիքը:

Հմտություններ

- վերլուծել կրթական տարբեր ռազմավարությունների առավելությունները և թերությունները.

կատարել թիմային արդյունավետ աշխատանք

Բովանդակությունը.

Թեմա 1. Ուսումնառության տեսակները (տեսողական, լսողական, ընթերցանական, փորձառական) և դրանց յուրահատկությունները: *Թեմա 2.* Ակտիվ ունկնդրում: *Թեմա 3.* Արդյունավետ գրառումների կատարում: *Թեմա 4.* Ընթերցանության SQ3R մեթոդը որպես հիշողության զարգացման և ընթերցածի ճիշտ ըմբռնման արդյունավետ գործիք: *Թեմա 5.* «Քանակական» դասընթացի ուսումնառության մեթոդներ: *Թեմա 6.* Թեստային առաջադրանքների ճիշտ կատարում: *Թեմա 7.* Թիմային աշխատանք կատարելու ռազմավարություններ: *Թեմա 8.* Ցկյանս ուսումնառություն:

Որակի ապահովումը ներառական կրթության մեջ - (3 կրեդիտ)

Շաբաթական ժամ (12 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

Նպատակը՝ ուսանողների համար բացահայտել ներառական կրթության էությունը, գաղափարախոսությունը, քաղաքականությունը, մեթոդաբանությունն ու բովանդակությունը,

ուսանողներին փոխանցել ներառական կրթության տեսագործնական առաջավոր փորձը, ուսուցանել ներառական կրթության կազմակերպման օրենսդրական և մանկավարժական հիմունքները, ուսանողներին նախապատրաստել աշխատանքի ներառական դպրոցներում, լուսաբանել ներառական կրթության դրվածքը, համակարգի զարգացումներն ու զարգացման միտումները, հանրահոշակման ուղիները Հայաստանի Հանրապետությունում:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- ներառական կրթության գաղափարախոսության, քաղաքականության, հայեցակարգի, բովանդակության, միջազգային փորձի և սկզբունքների վերաբերյալ
- ներառական կրթության որակի ապահովման և արդյունավետության բարձրացման ուղիների, միջոցների, ներառական ուսուցման կազմակերպման մեթոդիկաների ու տեխնոլոգիաների մասին,
- տիրապետում է ներառական կրթության իրավական, օրենսդրական և մանկավարժական հիմունքներին:

Կարողություն

- պլանավորել, կազմակերպել և իրականացնել մանկավարժական գործընթացը և վերլուծել ծագած հիմնախնդիրները,
- օգտվել հանրակրթության չափորոշից և կազմել ներառական գործընթացի կազմակերպման փաստաթղթեր,
- դրսևորել մանկավարժական վարպետություն,
- օգտվել ՀՀ օրենքներից ու նորմատիվ փաստաթղթերից,
- կիրառել ներառական ուսուցման մեթոդիկաները, տեխնոլոգիաները, մանկավարժական աջակցության ձևերը:

Հմտություններ

- բազմազան կարիքների տարբերակում և դրանց արձագանքելու հմտություն.
- ծնողների և ընտանքների հետ համատեղ աշխատանք. համագործակցություն և թիմային աշխատանք, որն օգնում է ուսուցիչներին արդյունավետ աշխատել այլ ուսուցիչների, ինչպես նաև կրթական և այլ ծառայությունների մի շարք մասնագետների հետ միևնույն թիմերում՝ դրպոցի ներսում և դպրոցից դուրս: Մասնագիտացած ուսուցիչների ուսուցում՝ ներառական միջավայրում բոլոր ուսուցիչներին աջակցություն տրամադրելու համար մասնագիտական ռեսուրսներ ստեղծելու և պահպանելու նպատակով.
- համօգտագործման ուսուցման հնարավորություններ տարբեր ծառայությունների և ոլորտների մասնագետների համար՝ արդյունավետ համատեղ աշխատանքին աջակցելու նպատակով.
- ուսուցում /վերապատրաստում դպրոցների/ կրթական հաստատությունների ղեկավարների համար՝ զարգացնելու նրանց առաջնորդի հմտությունները և գաղափարը ներառական արժեքների և պրակտիկայի խթանմանը համահունչ:

ուսուցման/վերապատրաստման եղանակներ և հնարավորություններ ներառական կրթության մանկավարժական աշխատակազմի համար, ինչը նրանց հնարավորություն կընձեռի դասավանդել նախնական և աշխատանքի առընթեր կրթական ծրագրեր, որոնք կխթանեն ներառական կրթության որակը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներառական կրթության գաղափարախոսությունը և բովանդակությունը: *Թեմա 2.* Ներառման քաղաքականություն և ներառման պրակտիկայի զարգացման գործընթացի կառավարումը: *Թեմա 3.* Մասնագիտական զարգացման նշանակությունը ներառական կրթության արդյունավետության բարձրացման համար: *Թեմա 4.* Ներառական կրթության կազմակերպման իրավական, օրենսդրական և մանկավարժական հիմունքները: *Թեմա 5.* Աշակերտակենտրոն ուսուցում: Ուսուցման մեթոդներ և տեխնոլոգիաներ: *Թեմա 6.* Ներառական կրթության կազմակերպման նորմատիվ և ուսումնամեթոդական փաստաթղթերի համալիրը: *Թեմա 7.* Ուսուցման գնահատումը որպես որակյալ կրթության բաղկացուցիչ: *Թեմա 8.* Ընտանիքի, դպրոցի և համայնքի համագործակցությունը և փոխներգործությունը: *Թեմա 9.* Ներառական կրթության ֆինանսական կառավարումը և աջակցությունը: *Թեմա 10.* Ուսուցման գործընթացում անցումային փուլերը և դրանց կառավարումը:

Մոդուլ 3. Ֆինանսներ և նրանց կառավարումը կրթության մեջ

S/մ 1273 Բարձրագույն կրթության շուկայագիտություն և կառավարում - (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

Մագիստրանտների մոտ ձևավորել տեսական և կիրառական բնույթի այնպիսի ունակություններ ու հմտություններ, որոնք հնարավորություն կտան յուրացնել կրթական հաստատությունների շուկայագիտության առանձնահատկությունները, կարողանալ իրականացնել շուկայի ուսումնասիրության միջոցառումներ, շուկայի, սպառողների և մրցակիցների վերաբերյալ տեսական գիտելիքներն ու ունակությունները կարողանալ կիրառել պրակտիկ գործունեության մեջ:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- ունենա հիմնարար մասնագիտական գիտելիքներ շուկայագիտություն և նրան հարակից տնտեսագիտական այլ գիտություններից և կարողանա դրանք կիրառել կրթական հաստատության շուկայավարման գործընթացում
- ցուցաբերել կայուն գիտելիքներ ձեռնարկչատիրություն, կոմերցիա, նախագծերի կառավարում գիտություններից ունենա բիզնեսին առնչվող ոլորտների համակողմանի իմացություն

Կարողություն

- կարողանա վերլուծաբար մոտենալ կրթական ծառայությունների մատուցման շուկայի կառավարման դեպքերին ու իրադարձություններին, կարողանա կատարել ինքնուրույն եզրահանգումներ, անցկացնել գույքահեռներ
 - կարողանա գնահատել շուկայական պահանջարկը և իրավիճակը, մրցակիցների և սպառողների վարքագիծը առաջարկվող կրթական ծառայությունների որակի նկատմամբ
 - կարողանա ուսումնասիրել ժամանակաշրջանին բնորոշ կրթական հաստատությունների շուկայական հիմնախնդիրների տեղեկացվածության և դրանց վերաբերյալ ժամանակակից տնտեսագիտական գնահատման մեթոդները
1. կարողանա յուրացնել կրթական հաստատությունների շուկայագիտության տարբեր ուղղությունների հիմնադրույթները

Հմտություններ

- շուկայավարման բնույթի որոշումներ կայացնել կրթական հաստատությունների սպասարկման և կառավարման ոլորտում
 - կարողանա վերլուծել շուկայագիտության ոլորտում առաջացած հիմնախնդիրները և տալ համարժեք լուծումներ
- կարողանա գնահատել առկա ռեսուրսները՝ կրթական հաստատությունների շուկայավարման գործընթացի և կառավարման նոր զարգացումներին համապատասխան կարողանա իրագործել կրթական հաստատությունների շուկայավարման վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կրթական հաստատությունների մարքեթինգի հասկացությունը: *Թեմա 2.* Կրթական հաստատությունների մարքեթինգի կազմակերպումը: *Թեմա 3.* Կրթական հաստատության արտաքին և ներքին մարկետինգային միջավայրը: *Թեմա 4.* Պահանջարկը որպես կրթական մարքեթինգի օբյեկտ: *Թեմա 5.* Նպատակային մարկետինգ: *Թեմա 6.* Կրթական ծառայությունների մատուցման շուկայավարություն: *Թեմա 7.* Գնային շուկայավարության առանձնահատկությունները կրթական հաստատություններում: *Թեմա 8.* Իրացման շուկայավարության առանձնահատկությունները կրթական հաստատություններում: *Թեմա 9.* Մարքեթինգային հետազոտությունները կրթական հաստատություններում: *Թեմա 10.* Բուհական կրթության որակի ապահովման համակարգը, գնահատման մեխանիզմները և կառավարման մեթոդական հիմքերը:

S/մ 1274 Ֆինանսների կառավարումը կրթության մեջ - (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Մագիստրանտների մոտ ձևավորել տեսական և կիրառական բնույթի այնպիսի ունակություններ ու հատկանիշներ, որոնք հնարավորություն կտան նրանց շուկայական տնտեսության պայմաններում տիրապետել տարբեր ձեռնարկությունների ֆինանսական կառավարման առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

1. ունենա բիզնեսին առնչվող ոլորտների համակողմանի իմացություն
2. ունենա հիմնարար մասնագիտական գիտելիքներ ֆինանսական կառավարում և նրան հարակից տնտեսագիտական այլ գիտություններից և կարողանա դրանք կիրառել գործնականում

Կարողություն

1. կարողանա գնահատել ազգային և համաշխարհային տնտեսության կայուն զարգացման անհրաժեշտությունը
2. կարողանա ուսումնասիրել ֆինանսական կառավարման ոլորտում առաջացած հիմնախնդիրները և տալ համարժեք լուծումներ
3. կարողանա գնահատել առկա ռեսուրսները՝ բիզնես կառավարման նոր զարգացումներին համապատասխան
4. ունակ լինի մշակել արտադրության արդիականացման նախագծեր
5. կարողանա ուսումնասիրել ժամանակաշրջանին բնորոշ տնտեսական հիմնախնդիրների տեղեկացվածության և դրանց վերաբերյալ ժամանակակից տնտեսագիտական գնահատման մեթոդները

Հմտություններ

1. տեխնիկական և վարչական բնույթի որոշումներ կայացնել արտադրական կառույցների սպասարկման և կառավարման ոլորտում
2. կարողանա իրագործել կառավարման վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություններ

կարողանա իրականացնել ֆինանսական կառավարման բնագավառում առաջացած խնդիրների ուսումնասիրում, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, պետական կառույցների, հիմնարկությունների, ձեռնարկությունների, կրթական, գիտական, մանկավարժական և այլ հաստատությունների գործունեության նախագծում, կազմակերպում և կառավարում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ֆինանսական կառավարման էությունը: *Թեմա 2.* Ռիսկ և եկամտաբերություն. Դրանց հիմնական հասկացությունները և վերլուծության մեթոդները: *Թեմա 3.* Ակտիվների գնահատման հիմնական մեթոդները: *Թեմա 4.* Ձեռնարկության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծությունը: *Թեմա 5.* Ձեռնարկության շրջանառու ակտիվների կառավարումը: *Թեմա 6.* Ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատումը: *Թեմա 7.* Ֆինանսական պլանավորումը ձեռնարկությունում: *Թեմա 8.* Ֆինանսական պլանավորումը ձեռնարկությունում: *Թեմա 9.* Ֆինանսական կառավարման առանձնահատկությունները կրթական:

S/մ 1269 Վիճակագրությունը կրթության մեջ - (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Առարկայի նպատակն է մագիստրանտների մոտ ձևավորել տեսական և կիրառական բնույթի այնպիսի ունակություններ ու հատկանիշներ, որոնք հնարավորություն կտան նրանց ճիշտ կողմնորոշվել տնտեսական հարաբերություններում, օգտվելով հավաքագրված անհրաժեշտ ինֆորմացիայից՝ արդյունավետ կիրառել այն տնտեսական գործունեության ընթացքում:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- ունենա հիմնարար մասնագիտական գիտելիքներ տնտեսագիտությունից, սոցիոլոգիայից, մաթեմատիկայից և ինֆունմատիկայից, կարողանա դրանք կիրառել գործնականում
- ունենա վիճակագրական տեղեկատվությունից օգտվելու համակողմանի կարողություն

Կարողություն

- կարողանա օգտվել “ՀՀ վիճակագրության մասին օրենք”-ի դրույթներից
- կարողանա ուսումնասիրել վիճակագրության ոլորտում առաջացած հիմնախնդիրները և կատարել համարժեք եզրահանգումներ
- վիճակագրության մեթոդներին տիրապետելու և խնդիրների լուծման կարողություն,
- վիճակագրական ցուցանիշների վերլուծության և կիրառության կարողություն

Հմտություններ

- կարողանա իրագործել վիճակագրության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություններ
- կարողանա իրականացնել վիճակագրության բնագավառում առաջացած խնդիրների ուսումնասիրում,
- ունակ լինի մշակել վիճակագրական հետազոտության համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վիճակագրության առարկան, մեթոդը և խնդիրները: *Թեմա 2.* Վիճակագրական դիտարկում: *Թեմա 3.* Վիճակագրական խմբավորումը: Աղյուսակներ: Բաշխման շարքեր: *Թեմա 4.* Բացարձակ, հարաբերական միջին մեծությունները և վարիացիայի ցուցանիշները: *Թեմա 5.* Բացարձակ, հարաբերական միջին մեծությունները և վարիացիայի ցուցանիշները: *Թեմա 6.* Ինդեքսներ: *Թեմա 7.* Երևույթների փոխկապվածության ուսումնասիրումը: *Թեմա 8.* Սոցիալ-տնտեսական երևույթների դինամիկայի ուսումնասիրումը: *Թեմա 9.* Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառումը սոցիալ-տնտեսական երևույթների հետազոտություններում:

Մոդուլ 4. Համագործակցություն և կառավարում

Հ/մ 1141 Կոնֆլիկտի կառավարում- (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (32 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիք, ձևավորել հմտություններ և կարողություններ կոնֆլիկտի կառավարման վերաբերյալ, որը և կնպաստի կրթական համակարգի, այն է՝ բարձրագույն մասնագիտական կրթության և հանրակրթական դպրոցների արդյունավետ կառավարմանը:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Ունի խորացված գիտելիքներ կոնֆլիկտի, նրա կառավարման ոլորտի վերաբերյալ, ծանոթ է տարբեր մոտեցումներին:
- Ունի խորացված գիտելիքներ կոնֆլիկտի արդյունավետ կառավարման մեթոդաբանության վերաբերյալ: Հանրային հարաբերությունների ներդրման տարբեր մեթոդաբանությունների վերաբերյալ:

Կարողություն

- Կիրառել կոնֆլիկտի կառավարման արդյունավետ հնարներ ռազմավարական նպատակների իրականացման համար:
- Մշակել և իրականացնել հետազոտություն կրթության ոլորտում կոնֆլիկտի կառավարման վերաբերյալ /օրինակ, կոնֆլիկտային իրադրությունների մշտադիտարկում և գնահատում, կրթական կոլեկտիվի հետ աշխատանքային գործընթացի աուդիտ/:
- Տվյալներ հավաքել, դրանք մեկնաբանել և ներկայացնել որոշակի գործիքներ և մեթոդներ կիրառության հնարավորություններ:

Հմտություններ

- Վերլուծել կոնֆլիկտի կառավարման չափանիշերը:
- Վերլուծել կոնֆլիկտի կառավարման մոդելները:

Կիրառել ստացված գիտելիքները կոնֆլիկտի կառավարման գործընթացում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հասկացություն կոնֆլիկտի կառավարման մասին: Ներածություն: Հիմնական հասկացություններ, կոնֆլիկտի կառավարման մշակույթ, դինամիկա, հանգուցալուծում:

Թեմա 2. Կոնֆլիկտի կառավարման մոտեցումները: Կոնֆլիկտոլոգիական մոտեցում, առաջացման նախադրյալները, զարգացման պատմությունը:

Թեմա 3. Կոնֆլիկտի հասկացությունը և տիպաբանությունը: Հասկացություն կոնֆլիկտի մասին, օբյեկտը և առարկան, դասակարգման չափանիշները, հիմնական մոդելները:

Թեմա 4. Կոնֆլիկտի կառուցվածքը, տարրերտ, առաջացման պատճառները: Կոնֆլիկտի հիմնական տարրերը՝ օբյեկտիվ, անձնային, դրանց կառուցակարգման առանձնահատկությունները: Առաջացման հիմնական պատճառները, դրանց կանխարգելման հավանականությունը, հետաքրքրությունների հակասությունը, օբյեկտիվ և անձնային գործոնները:

Թեմա 5. Կոնֆլիկտների հիմնական գործառույթները և դինամիկայի կառավարումը: Գործառույթի հասկացությունը, դրանց մեկնաբանությունները: Կառուցողական և ապակառուցողական գործառույթներ: Դինամիկայի հասկացությունը, փուլերը. նախակոնֆլիկտային իրադրություն, բաց կոնֆլիկտ, հետկոնֆլիկտային փուլ:

Թեմա 6. Կոնֆլիկտի տեսակները և նրանց կառավարումը. Միջանձնային և ներանձնային կոնֆլիկտներ: Միջանձնային կոնֆլիկտների առանձնահատկությունները: Միջանձնային կոնֆլիկտները ընտանիքում: Միջանձնային կոնֆլիկտները մանկավարժական պրոցեսում: Ներանձնային կոնֆլիկտների հասկացությունը և տեսակները: Ներանձնային կոնֆլիկտների պատճառները և հետևանքները: Ներանձնային կոնֆլիկտների կանխարժեքային և լուծման ձևերը:

Թեմա 7. Միջխմբային կոնֆլիկտներ, կոնֆլիկտի կառավարումը կազմակերպություններում: Կազմակերպություններում կոնֆլիկտների առանձնահատկությունը: Կազմակերպչական կոնֆլիկտները: Արտադրական կոնֆլիկտները: Աշխատանքային կոնֆլիկտները կազմակերպությունում: Կոնֆլիկտներով դեկավարելու առանձնահատկությունը: Միջխմբային կոնֆլիկտների առանձնահատկությունները: Միջխմբային կոնֆլիկտների առաջացման առանձնահատկությունները: Միջխմբային կոնֆլիկտների տիպաբանությունը: Քաղաքական կոնֆլիկտները: Էթնիկական կոնֆլիկտները:

Թեմա 8. Կոնֆլիկտների կանխարգելումը և հանգուցալուծման մեթոդները: Կոնֆլիկտից խուսափման մարտավարությունը և բռնության մեթոդը: Երկու մոտեցում կոնֆլիկտի լուծման վերաբերյալ: Փոխադարձ հաղթանակի մարտավարության իրագործման հիմնական մեխանիզմները: Կոնֆլիկտների լուծման ունիվերսալ միջոցները և նրա արդյունքները: Կոնֆլիկտների կանխարգելման դժվարությունները և նրանց կանխարգելման եղանակները: Կոնֆլիկտային անձնավորությունների խնդիրը:

Թեմա 9. Կոնֆլիկտի կառավարման միջոցները. Բանակցություններ: Բանակցությունների ընդհանուր բնութագիրը: Բանակցությունների վարման ռազմավարությունը: Բանակցությունների դինամիկան: Միջնորդությունը բանակցային գործընթացում:

S/մ 1277 Բուհի ֆինանսական միջոցներ և դրամաշնորհներ - (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (28 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

Մագիստրոսների մոտ ձևավորել կիրառական բնույթի այնպիսի ունակություններ ու հմտություններ, որոնք հնարավորություն կտան որպես կրթության կառավարիչ մասնակցել կրթության վերաբերող դրամաշնորհային ծրագրերին:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- ունենա հիմնարար մասնագիտական գիտելիքներ բուհ-ի ֆինանսական միջոցների և դրամաշնորհների վերաբերյալ
- Կարողանա իրականացնել բուհ-երի գործունեության մոնիտորինգ

Կարողություն

- իրականացնել աշխարհում գործող բարձրագույն ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում
- վերլուծել ժամանակաշրջանին բնորոշ կրթական հաստատությունների ֆինանսավորման աղբյուրների հիմնախնդիրները

Հմտություններ

- Իրականացնել մասնագիտական կրթության ֆինանսավորման տարբեր աղբյուրների օպտիմալ գուգակցում

դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու հմտություն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայաստանի բարձրագույն կրթության կառավարման համակարգի վերակառուցումը: *Թեմա 2.* Բուհերի կառավարման հիմնախնդիրները բոլոնյան գործընթացի համատեքստում: *Թեմա 3.* Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման վերափոխումները: *Թեմա 4.* ՀՀ բարձրագույն կրթական համակարգի երկարաժամկետ զարգացման ռազմավարությունը: *Թեմա 5.* ՀՀ օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին: *Թեմա 6.* Կրթական համակարգերի բարեփոխումների ուղղությունները ՀՀ-ում: *Թեմա 7.* Միջազգային և միջկառավարական բուհեր: *Թեմա 8.* Ազգային կրթական քաղաքականության վրա ազդող գործոնների վերլուծությունը: *Թեմա 9.* Մենեջմենտի գործառույթները կրթության բաց համակարգերի զարգացման գործում: *Թեմա 10.* Բուհերի ֆինանսավորման խնդիրները: *Թեմա 11.* Պետական և մասնավոր բուհերի ֆինանսավորման միջև տարբերությունները: *Թեմա 12.* Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգերը: *Թեմա 13.* Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրները: *Թեմա 14.* Բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման հիմնական սկզբունքները: *Թեմա 15.* Մասնագիտական կրթության ֆինանսավորման եղանակները:

Փ/մ 1239 Հանրության հետ կապերի կառավարում - (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (32ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիք, հմտություններ և կարողություններ կրթության մեջ հանրային հարաբերությունների ապահովման վերաբերյալ, որը և կնպաստի կրթական համակարգի, այն է՝ բարձրագույն մասնագիտական կրթության և հանրակրթական դպրոցների արդյունավետ կառավարմանը:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Դրսևորեն խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում հանրային հարաբերությունների կառավարման վերաբերյալ:
- Այն արժեքների, սկզբունքների և փորձի վերաբերյալ, որոնք նպաստում են հանրային հարաբերությունների կառավարմանը եվրոպական կրթական տարածքում:
- Հանրային հարաբերություններին առնչվող տարբեր մոտեցումների վերաբերյալ:
- Հանրային հարաբերությունների ներդրման տարբեր մեթոդաբանությունների վերաբերյալ:

Կարողություն

- Կիրառելու հանրային հարաբերությունների չափանիշերը և չափորոշիչները:
- Կիրառելու ձեռք բերված գիտելիքները կարիքների բացահայտման նպատակով:
- Իրականացնելու գիտելիքի յուրացման ինքնավերլուծություն:
- Իրականացնելու գիտելիքի յուրացման գնահատում:

Հմտություններ

- Կիրառել ոլորտի վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց մեկնաբանության և ներկայացման հիմնական գործիքակազմը:
- Վերլուծելու հանրային հարաբերությունների մոդելները:
- Կիրառելու ստացված գիտելիքները հանրային հարաբերությունները կատարելագործման գործընթացում:

տեղեկատվությունը կառավարելու ունակություն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հանրային հարաբերություններ՝ հիմնական հասկացություններ: *Թեմա 2.* Հաստատությունը որպես համակարգ: *Թեմա 3.* Հանրային հարաբերությունների քաղաքականության ներդրում և հանրային հարաբերությունների մշակույթի ձևավորում: *Թեմա 4.* Իրավական և էթիկական ասպեկտները հանրային հարաբերությունների գործունեության մեջ: *Թեմա 5.* Հանրային հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները: *Թեմա 6.* Հանրային հարաբերությունները ՋԼՄ-ների միջոցով: *Թեմա 7.* Հանրային հարաբերություններ և հաղորդակցություն: *Թեմա 8.* Ներքին հանրային հարաբերություններ: *Թեմա 9.* Արտաքին հանրային հարաբերություններ: *Թեմա 10.* Հանրային հարաբերությունները ճգնաժամային իրավիճակներում:

Հ/մ 1275 Ռիսկերի կառավարումը կրթության մեջ - (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (32ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

Ռիսկի բացահայտման և այն կառավարման սկզբունքների իմացությունը հնարավորություն կընձեռնի մագիստրոսներին ձեռք բերել հաստատության ներքին վերահսկման կարևոր

բաղադրիչների վերաբերյալ խորը գիտելիքներ և հմտություններ ռիսկերը բացահայտելու, նվազեցնելու և ղեկավարելու գործընթացի բոլոր մակարդակները: Ուսանողները ունակ կլինեն մշակելու հստակ ռազմավարություն կրթական միջավայրի անվտանգությունը ապահովելու և վերահսկելու այն արտաքին և ներքին ներգործությունները, որոնք կխոչընդոտեն կազմակերպության նպատակների իրականացումը, կկարողանան կազմակերպել հաստատության ներքին միջավայրի հետազոտություն, կատարել արդյունքների վերլուծություն և մեկնաբանում /կտիրապետեն համապատասխան մեթոդների/, ինչպես նաև մշակել մեխանիզմներ կազմակերպության ներքին միջավայրի վերահսկողությանը ապահովելու համար:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Ունի խորացված գիտելիքներ ռիսկերի կանխատեսման վերաբերյալ

Կարողություն

- Գնահատել և կանխատեսել կրթության կառավարման բնագավառում ռիսկերը Տվյալներ հավաքել, դրանք մեկնաբանել և ներկայացնել որոշակի գործիքներ և մեթոդներ կիրառությամբ:

Հմտություններ

- Վերլուծել կրթական հաստատության ռիսկերը:
- Վերլուծել ռիսկերի կանխատեսման ուղիները:

Կիրառել ստացված գիտելիքները կրթական համակարգում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ռիսկերը, նրանց տեսակները: Ռիսկերի սահմանում: Կազմակերպության նպատակները: Կազմակերպության ռիսկերի կառավարման հիմնական բաղադրիչները. ներքին միջավայր, նպատակներ, իրադրությունների սահմանում, ռիսկերի գնահատում, վերահսկման միջոցներ, տեղեկատվություն և մոնիթորինգ: *Թեմա 2.* Կազմակերպության ռիսկերի կառավարման գործընթացները և դրա կապը կազմակերպության նպատակների հետ: *Թեմա 3.* Ներքին միջավայր Ռազմավարական պլանավորման սկզբունքներ, մոտեցումներ: Ռազմավարական պլանավորման հիմնական տարրերը: Կազմակերպության հեռանկարը, տեսլականը, առաքելությունը, կառուցվածքը: Ներքին միջավայրի գործոնները: Ռիսկերի ղեկավարման փիլիսոփայությունը: Մարդկային ռեսուրսների ղեկավարման ոլորտի չափորոշիչները: Իրավասությունների և պատասխանատվության սահմանում: *Թեմա 4.* Կազմակերպության նպատակների և ներգործող իրադարձությունների սահմանում Ռազմավարական, տակտիկական, գործիքային նպատակներ: Նպատակների ընտրություն, իրականացման հավանականություն/ռիսկերի, հաջողությունների գնահատում/, Թույլատրելի ռիսկեր: Իրադարձությունների սահմանում: Իրադարձությունների որոշման/կանխատեսման/ մեթոդներ /իրադարձությունների ցանկ, ներքին վերլուծություն, շեմքային նշանակություններ, մասնագիտացված սեմինարներ, բանավեճեր, գործընթացի

կառուցվածքային վերլուծություն/։ Իրադարձությունների դասակարգում։ Իրադարձությունների փոխկապակցվածությունը։ *Թեմա 5*. Ռիսկերի գնահատում Ռիսկի ծագման և ազդեցության հավանականության գնահատում։ Կազմակերպության անցյալում ծագած ռիսկերի ուսումնասիրություն և նոր ռիսկերի առաջացման հավանականության ոտրշում։ Ռիսկերի գնահատման մեթոդներ/ հավանակնության և անհավանականության մոդելներ/։ *Թեմա 6*. Ղեկավարության հակազդումը ռիսկերին և դրանց վերահսկողության միջոցները : Ռիսկերին հակազդելու միջոցները / խուսափում ռիսկից, ռիսկի նվազեցում, ռիսկի ընդունում/։ Ռիսկի ազդեցության և հավանականության ներգործության գնահատում, Շահույթի և վնասի գնահատում։ հակազդման տեսակի ընտրություն։ Ամբողջական մոտեցում։ Վերահսկողության տեսակները։ Կազմակերպության քաղաքականությունը և միջոցառումները։ Վերահսկողության ընդհանուր միջոցները։ *Թեմա 7*. Տեղեկատվություն և կոմունիկացիաներ։ Տեղեկատվության սահմանում, նշանակությունը կազմակերպության կյանքում։ Ինֆորմացիայի արդիականությունը և լիարժեքությունը։ Ռազմավարական ինտեգրացիոն համակարգեր։ ինտեգրավորումը հիմնական գործունեության հետ։ Կոմունիկացիայի միջոցները։ Արտաքին և ներքին կոմունիկացիա։ *Թեմա 8*. Մշտադիտարկում։ Ընթացիկ մշտադիտարկում։ Ստուգման գործընթաց, ստուգումների ծավալը և պարբերականությունը։ Մշտադիտարկման մեթոդաբանությունը, փաստաթղթերը։ Ստացված տվյալների հրապարակում։ *Թեմա 9*. Կամակերպության անդամների գործառույթները և պարտականությունները։ *Թեմա 10*. Կազմակերպության աշխատակազմը։ Ղեկավարությունը։ Ռիսկերի ղեկավարման տնօրեն, ֆինանսական ղեկավարներ։ Ներքին և արտաքին աուդիտորներ։ Օրենսդիր և վերահսկող մարմիններ։ *Թեմա 11*. Ռիսկերի ղեկավարման գործընթացի գործառնությունը կազմակերպության սահմաններում։ Ռիսկերի ղեկավարման գործընթացի գործառնության սահմանափակումները, գործոնները։ Ղեկավարության քաղաքականությունը։

Մոդուլ 5. Կրթության հետազոտության մեթոդներ

Հ/մ 1142 Հետազոտության մեթոդներ- (8 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 64 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողների մոտ գիտելիքների և հմտությունների բազա ստեղծել կրթության կառավարման գործում քանակական և որակական հետազոտություններ նախագծելու, իրականացնելու և ստացված արդյունքների հիման վրա անհրաժեշտ փոփոխություններ կառուցելու համար։

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Քանակական և որակական հետազոտությունների կիրառելիության դաշտերի, տարբերությունների վերաբերյալ,
- Քանակական և որակական հետազոտությունների ընթացակարգերի առանձնահատկությունների վերաբերյալ,
- Քանակական և որակական հետազոտությունների մեթոդների վերաբերյալ,
- Քանակական և որակական տվյալների, դրա վերլուծության առանձնահատկությունների վերաբերյալ

Կարողություն

- Սահմանագծել կրթական համակարգի կոնկրետ պրոբլեմ,
- Դրա շուրջ մշակել հետազոտության օպտիմալ ծրագիր,
- Իրականացնել հետազոտություն, վերահսկել ընթացքը,
- Աշխատել որակական և քանակական տվյալների հետ, համադրել դրանք, ընդհանրացնել, քանակականը բերել որակական տեսքի, ապահովել հաշվետվողականություն

Հմտություններ

- Բացահայտել պրոբլեմը, վերլուծել այն այլ երևույթների հետ կապի տեսանկյունից
- Լինել իրատես
- Աշխատել թիմում
- Փաստարկել յուրաքանչյուր քայլ
- Դուրս բերել պրոբլեմի զարգացման օրինաչափությունը

Կանխատեսել հնարավոր փոփոխությունը

Բովանդակությունը.

Թեմա 1. Քանակական և որակական հետազոտությունների տեսական և մեթոդաբանական խնդիրները: *Թեմա 2.* Քանակական հետազոտության ընթացակարգը: *Թեմա 3.* Հետազոտության ծրագրի մշակում. պրոբլեմային իրավիճակի նախնական քննություն, ծրագրի մեթոդաբանական մաս.պրոբլեմի սահմանում և հիմնավորում, հետազոտության նպատակ, խնդիրներ, օբյեկտ, առարկա, հիպոթեզներ, հիմնական հասկացությունների սահմանում, (կոնցեպտուալիզացիա և օպերացիոնալիզացիա), ծրագրի մեթոդական մաս. ընտրանքի սահմանում, առաջնային ինֆորմացիայի ստացման մեթոդի հիմնավորում: *Թեմա 4.* Քանակական հետազոտության մեթոդներ: *Թեմա 5.* Քանակական հետազոտության ընթացակարգը: *Թեմա 6.* Որակական հետազոտություն: *Թեմա 7.* Որակական հետազոտության մեթոդները: *Թեմա 8.* Մասնակիցների արագ գնահատման մեթոդ:

Ի/Մ1301 Տեղեկատվական տեխնոլոգիաները հետազոտության ոլորտում- (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 12 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Առարկայի նպատակն է մագիստրանտների մոտ ձևավորել տեսական և կիրառական բնույթի այնպիսի ունակություններ ու հատկանիշներ, որոնք հնարավորություն կտան ճիշտ կողմնորոշվել հավաքագրված բազմաբնույթ ու լայնածավալ տեղեկատվության հզոր

դաշտում, արդյունավետ կիրառել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները կրթության կառավարման բնագավառում իրականացվող հետազոտությունների ընթացքում:

Կրթական արդյունքները.

Գիտելիքներ

- տեղեկատվական և հաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների, նրանց աշխատանքի հիմնական սկզբունքների վերաբերյալ,
- մուլտիմեդիա տեխնոլոգիաների, տեղեկատվության ներկայացման ծրագրային միջոցների աշխատանքի սկզբունքների վերաբերյալ,
- էլեկտրոնային աղյուսակների ղեկավարման MsExcel ծրագրային փաթեթի կիրառման հնարավորությունների վերաբերյալ,

տվյալների հենքերի ղեկավարման MsAccess ծրագրային փաթեթի կիրառման հնարավորությունների վերաբերյալ:

Կարողություններ

- կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ու տեղեկատվական համակարգերի ընձեռած հնարավորությունները տվյալներն արդյունավետ կերպով հավաքագրելու, վերլուծելու և ներկայացնելու համար
- կառուցել Web-էջեր HTML լեզվով՝ ներառելով տեքստ, գրաֆիկա, հղումներ, CSS ոճեր,
- օգտագործել տարածված ծրագրային փաթեթները կրթության կազմակերպման բնագավառում հետազոտությունների իրականացման համար
- կառուցել ֆունկցիաների արժեքների աղյուսակներ և դրանց գրաֆիկները, ձևավորել ու լրացնել դրանք, կառուցել երկչափ ու եռաչափ դիագրամներ
- կիրառել ստանդարտ (մաթեմատիկական, տրամաբանական, ֆինանսական, վիճակագրական և այլն) ֆունկցիաները կրթության կազմակերպման բնագավառում հետազոտությունների իրականացման համար

սրոհել և պահպանել տվյալները մի քանի աղյուսակներում, ստեղծել նրանց միջև կապեր, օգտագործել հարցումներ, կառուցել ձևեր ու հաշվետվություններ:

Հմտություններ

- համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
- համակարգել, մեկնաբանել և ներկայացնել բովանդակային տեղեկատվություն մասնագիտական միջավայրում, օգտագործել իր ձեռքբերումները մասնագիտական գործունեության ընթացքում,

հետևողականորեն կատարելագործել իր առարկայական-մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով տարբերակել ինքնազարգացման հնարավորությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Համակարգչային գրագիտություն: Համակարգչային հիմնական, լրացուցիչ, ցանցային սարքավորումների նշանակությունը, աշխատանքի սկզբունքները, բնութագրիչ պարամետրերը: Սարքավորումների տեղակայում: Համակարգչային տարածված ծրագրերի տեղադրում և հեռացում: Տեղեկատվության որոնում և արխիվացում: Թարգմանիչ ծրագրեր և բառարաններ: Համակարգչից օգտվելու անվտանգության տեխնիկայի կանոններ: Համակարգչային վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: *Թեմա 2.* Հաղորդակցման տեխնոլոգիաներ: Համակարգչային ցանցերի կառուցման և աշխատանքի սկզբունքները: Համակարգչային ցանցերի տեսակները: Համակարգչային ցանցերի ծրագրային և տեխնիկական միջոցները: Գաղափար Internet ցանցի մասին: Web էջերի կառուցումը / HTML/ հիպերտեքստի նշագծման լեզվի միջոցով: CSS ոճեր: Նրանց հետ աշխատանքի հիմնական սկզբունքները: Ինտերնետի ինֆորմացիոն ռեսուրսները: Կիրառական հաղորդակարգեր: *Թեմա 3.* Էլեկտրոնային աղյուսակներ: Էլեկտրոնային աղյուսակի էջեր և բջիջներ: Բջիջների բացարձակ և հարաբերական հասցեավորում: Ֆունկցիաների վարպետի կիրառում: Ստանդարտ ֆունկցիաների՝ մաթեմատիկական, տրամաբանական, ֆինանսական, վիճակագրական և այլն, կիրառությունը հետազոտությունների իրականացման և վերլուծության բնագավառում: Դիագրամների կառուցում, ձևավորում: Մակրոսներ. դրանց ստեղծման ու կիրառման սկզբունքները: *Թեմա 4.* Մաթեմատիկական մոդելներ: Հետազոտությունների բնագավառում մոդելների կառուցման սկզբունքները: Տիպային խնդիրների հետազոտական մոդելների մշակում: *Թեմա 5.* Տվյալների բազաներ: Տվյալների բազաների նախագծում, կառուցվածքի մշակում, կոնցեպտուալ մոդելի ստեղծում: ՏԲ-ի ռեյալիզացիոն վերծանելու կանոնները: Աղյուսակներ, կապեր, նորմավորված ձևեր: Մեկնաբանություններ: Ձևեր: Հարցումներ: Հաշվետվություններ: Տվյալների հենքի մոդելի իրականացումը SQL ՏԲՂՀ-ում:

Մոդուլ 6. Միջանձնային հարաբերություններ և առաջնորդություն

Մ/մ 1117 Միջանձնային հարաբերություններ և հաղորդակցություն- (3 կրեդիտ)

Շաբաթական ժամ (12 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Կամրնտրական դասընթաց

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիք, հմտություններ և կարողություններ միջանձնային հարաբերությունների և հաղորդակցության վերաբերյալ, որը կնպաստի կրթական համակարգին, այն է՝ բարձրագույ մասնագիտական կրթության և հանրակրթական դպրոցների արդյունավետ կառավարմանը:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Հասարակության մեջ համալսարանների տարաբնույթ դերերի, պատասխանատվությունների, շահերի մասին
- Հանրային հարաբերությունների ներդրման տարբեր մեթոդաբանությունների վերաբերյալ:

Հմտություններ

- օգտագործել բարձրագույն կրթությունը բարելավելու հնարավորությունները՝ հիմնված կառավարման սկզբունքների վերաբերյալ առողջ գիտելիքի, ինչպես նաև արդյունավետ առաջնորդության, հաղորդակցության և թիմային աշխատանք կատարելու հմտությունների կիրառության վրա.
- Կարողանալ կառավարել բարեփոխումները,
- անաչառորեն գնահատել սեփական կարողությունները.
- մշակել արդյունավետ ուսումնառության անհատական մեթոդներ.
- այդ մեթոդները ներդնել կրթական գործընթացում.
- կառավարել և արդյունավետ կիրառել գիտելիքը:

կիրառել ձեռք բերված գիտելիքները կարիքների բացահայտման նպատակով

Կարողություն

կիրառել տվյալների հավաքագրման, մեկնաբանության և ներկայացման հիմնական մեթոդներն ու գործիքները /քանակական և որակական/:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հաղորդակցություն և փոխազդեցություն: Հասարակական և միջանձնային հարաբերություններ: Հաղորդակցության ինտերակտիվ բնույթը: *Թեմա 2.* Փոխազդեցության բնույթը և կառուցվածքը: Փոխազդեցության տեսակները: Փոխազդեցությունը որպես հասարակական գործունեության կազմակերպում: Փոխազդեցության ռեգիստրացիայի փորձնական սխեմաներ: *Թեմա 3.* Հաղորդակցության պերցեպտիվ կողմը: Հասարակական պերցեպցիայի հասկացությունը: Միջանձնային ընկալման մեխանիզմներ: Միջանձնային ատրակցիա: *Թեմա 4.* Անհատը խմբում. սոցիալական իդենտի ֆիկացիա: Աթիթյուդ և իրական վարք: Անհատի դիսպոզիցիայի աստիճանակարգային կառուցվածքը: Սոցիալական հանգամանքների փոփոխություն: Միջանձնային հարաբերությունների ուսումնասիրման մեթոդներ: *Թեմա 5.* Սոցիալական խմբերի դասակարգում: Հասարակության շերտադասում: Հասարակական դասեր և շերտեր: Էթնիկ խմբեր: Գենդերային և տարիքային խմբեր և հնարավորությունները: *Թեմա 6.* Անհատը տարերային խմբերում և մասսայական շարժումներում: *Թեմա 7.* Դինամիկ պրոցեսները փոքր խմբերում: Առաջնորդություն և ղեկավարում: Առաջնորդության ոճեր: Կորպորատիվ որոշումներ: Առաջնորդության ոճերի աշխտորոշման մեթոդիկա: *Թեմա 8.* Ներխմբային հարաբերությունների ուսումնասիրման մեթոդիկան: *Թեմա 9.* Շփման հաղորդակցական կողմը: *Թեմա 10.* Հաղորդակցության ձևերը և տեսակները: *Թեմա 11.* Հետադարձ կապի կոնցեպցիա:

Մ 6 Հ/մ Կրթության կառավարման հոգեբանություն- (6 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Փ/մ 1238 Համագործակցային մշակույթ և էթիկա- (6 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին զինել հռետորական խոսքի արդի միջոցներով, մշակույթը իբրև հաղորդակցման հզոր գործոն դարձնելու հմտություններով:

Ուսանողին դարձնել բազմամշակույթ միջավայրին ինտեգրվող անհատ:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- Մշակույթ և մասնավորապես, համագործակցության մշակույթի և հռետորական էթիկայի վերաբերյալ
- Կճանոթանա մշակութային երկխոսության՝ իբրև հաղորդակցման մշակույթի ձևավորման գլխավոր գործիքի ձևին և բովանդակությանը

Կարողություն

- Դասավանդել տարբեր խմբերի՝ պրակտիկայում կիրառելով ձեռքբերված տեսական գիտելիքները՝ վերընշված բնագավառների գծով
- Ուսուցանելու ընթացքում վերհանել մշակութային հաղորդակցման թույլ կողմերն ու թերությունները
- Մշակել թույլ կողմերն ուժեղացնելու և թերությունները հաղթահարելու սեփական ուղիներ
Կազմակերպել համատեղ ելույթներ՝ արտահայտված պրոբլեմների և դրանց լուծման հնարավոր միջոցների վերաբերյալ (պատրաստել հռետորներ):

Հմտություններ

- ձևավորել “մշակութային գնահատականի” չափանիշները
- ձևավորել “համագործակցության ինտենսիվության գնահատման” չափանիշներ

Բովանդակությունը.

Թեմա 1. Համագործակցային մշակույթ և էթիկա գիտակարգի օբյեկտը և ուսումնասիրության շրջանակները: Մշակույթի և էթիկայի կատեգորիալ համակարգը: *Թեմա 2.* Միջմշակութային հանդուրժողականության ձևավորման արդի խնդիրները: Ստերեոտիպերի դերը միջմշակութային երկխոսության համատեքստում: *Թեմա 3.* Միաչափ հասարակություն և

արդիականացում: *Թեմա 4*. Հաղորդակցման պրոբլեմը: Հաղորդակցումն իբրև համագործակցության պայման: *Թեմա 5*. Մշակութային հաղորդակցում: *Թեմա 6*. Համագործակցություն, նրա տեսակներ: Մշակութային համագործակցություն (մշ. Դիալոգ և բազմամշակութայնություն): *Թեմա 7*. Հռետորական արվեստն իբրև համագործակցային մշակույթի տարր: Համագործակցային մշակույթ և էթիկա:

S/մ 1270 Մարդկային ռեսուրսների կառավարումը կրթության մեջ - (6 կրեդիտ)

Շաբաթական ժամ (24 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Կամընտրական դասընթաց

Նպատակը.

- Բացահայտել մարդկային ռեսուրսների կառավարման դերը կազմակերպության գործունեության զարգացման մեջ:
- Տալ համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ կրթական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ, որը և կնպաստի բարձրագույն մասնագիտական կրթության և հանրակրթական դպրոցների արդյունավետ կառավարմանը:
- Ձևավորել գիտելիքներ իննովացիոն կառավարման ժամանակ աշխատողների հավաքագրման և ադապտացիայի առաանձնահատկությունների վերաբերյալ:
- Ծանոթացնել կազմակերպական կառուցվածքի ձևավորման ռանձնահատկություններին:
- Նպաստել ուսանողների տեսական գիտելիքների վերածմանը կիրառական ունակությունների:
- Ձևավորել աշխատանքի ընդունվելու հարցազրույց անցկացնելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- ուսումնառության այն մեթոդները, որոնք շեշտադրում և ապահովում են ուսանողի առավելագույն ներգրավվածությունը կրթական գործընթացում.
- ուսումնառության տարբեր մեթոդների առավելությունները և թերությունները.
- ինչպես զարգացնել կրթական հմտություններ.
- ժամանակակից հասարակության մեջ կրթական նոր և գերակշռող միտումներ:

Կարողություններ

- կիրառել տվյալների հավաքագրման, մեկնաբանության և ներկայացման հիմնական մեթոդներն ու գործիքները /քանակական և որակական/.

Հմտություններ

- կառավարել կազմակերպության զարգացման ծրագրերը,
- Ունակ լինել առաջնորդել թիմը, աշխատակազմը,

- կատարել կրթական համակարգում մարդկային ռեսուրսների պլանավորում
- վերլուծել կրթական համակարգում մարդկային ռեսուրսների հավաքագրման, ադապտացիայի, խրախուսման համակարգերի մոդելները,
- կատարել թիմային արդյունավետ աշխատանք.

Կիրառել ստացված գիտելիքները կրթական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բնութագիրը: Մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարական պլանավորում: Անձնակազմի կառավարման մեթոդոլոգիական հիմքերը: *Թեմա 2.* Մարդկային ռեսուրսների ֆունկցիոնալությունը (պոտենցիալի հայտնաբերում, մոնիտորինգի համակարգ, մոնիտորինգային հանդիպումներ): Մարդկային ռեսուրսների զարգացում (երկարաժամկետ զարգացում, զարգացման համակարգ, ֆունկցիոնալ թրեյնինգներ): Մարդկային ռեսուրսների արտադրողականություն (չափորոշիչների որոշում, գնահատման համակարգ, գնահատման համապատասխանություն): *Թեմա 3.* Կազմակերպության կառուցվածավորման եղանակները: Կազմակերպական կառուցվածքի տեսակները: *Թեմա 4.* Դասավանդող և ուսումնասովանող անձնակազմի կառավարում:

Մարդկային ռեսուրսների պլանավորում: Աշխատողների հավաքագրում, փուլերը: Աշխատողների ադապտացիա: Աշխատողների խրախուսում (մարդակենտրոն մոտեցումներ, անհատական խրախուսման համակարգ, աշխատավարձերի վարչարարություն): Աշխատողների վերապատրաստում: Մարդկային ռեսուրսների հեռացում (փոխարինման որոշում, հեռացման համակարգ): *Թեմա 5.* Մոտիվացիայի կառավարում: Աշխատողների վերապատրաստման համակարգի կիրառություն: Աշխատողների շարժունություն և փոխատեղում: Աշխատանքի նպաստավոր պայմանների ստեղծում: Ինքնաձևանաչում և ինքնակառավարում: Ստեղծագործականություն և կառավարում: *Թեմա 6.* Կազմակերպական կառավարում: Կազմակերպական կառավարման էությունը, անհրաժեշտությունը, մեթոդներն ու սկզբունքները: Կառավարման տեսության ու պրակտիկայի զարգացման փուլերը: Կազմակերպությունների ձևերը, կառավարման մակարդակները: *Թեմա 7.* Կոնֆլիկտների կառավարում (սահմանում, արմատներ, պատճառներ, մեթոդներ, լուծման գործիքներ): Սթրեսի կառավարում: Թիմի կառուցում (նպատակները, դերը գործընթացները): Որոշումների ընդունում: *Թեմա 8.* Կրթական համակարգի իննովացիոն կառավարում և մարդկային ռեսուրսներ: Նորամուծական գործընթացների կազմակերպման առանձնահատկությունները: Նորամուծությունների արժեքային տեսակետը և մրցակցության զարգացումը: Մրցակցության առկայությունը և խորացումը՝ որպես շուկայական հարաբերությունների բնական վիճակ: Մրցակցային միջավայրի ձևավորումը, վերափոխումը: *Թեմա 9.* Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատում: Անձնակազմի կառավարման արդյունավետության բարձրացումը կազմակերպություններում: Ղեկավար կադրերի պատրաստում և կրթական համակարգում առաջխաղացման կառավարում:

Հանրային հարաբերությունների կառավարում- (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ (32 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Տալ համապատասխան գիտելիք, հմտություններ և կարողություններ կրթության մեջ հանրային հարաբերությունների ապահովման վերաբերյալ, որը և կնպաստի կրթական համակարգի, այն է՝ բարձրագույն մասնագիտական կրթության և հանրակրթական դպրոցների արդյունավետ կառավարմանը:

Կրթական արդյունքները.

Գիտելիք

- դրսևորեն խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում հանրային հարաբերությունների կառավարման վերաբերյալ:
 - Այն արժեքների, սկզբունքների և փորձի վերաբերյալ, որոնք նպաստում են հանրային հարաբերությունների կառավարմանը եվրոպական կրթական տարածքում:
 - Հանրային հարաբերություններին առնչվող տարբեր մոտեցումների վերաբերյալ:
- Հանրային հարաբերությունների ներդրման տարբեր մեթոդաբանությունների վերաբերյալ:

Կարողություն

- Կիրառելու հանրային հարաբերությունների չափանիշերը և չափորոշիչները:
 - Կիրառելու ձեռք բերված գիտելիքները կարիքների բացահայտման նպատակով:
 - Իրականացնելու գիտելիքի յուրացման ինքնավերլուծություն:
- Իրականացնելու գիտելիքի յուրացման գնահատում:

Հմտություն

- Կիրառել ոլորտի վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց մեկնաբանության և ներկայացման հիմնական գործիքակազմը:
- Վերլուծելու հանրային հարաբերությունների մոդելները:
- Կիրառելու ստացված գիտելիքները հանրային հարաբերությունները կատարելագործման գործընթացում:

տեղեկատվությունը կառավարելու ունակություն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հանրային հարաբերությունները կրթության մեջ՝ հիմնական հասկացություններ: Ներածություն: «Հանրային հարաբերությունները կրթության մեջ» դասընթացը Բոլոնյան գործընթացի մարտահրավերների ներքո: Հասկացություն հանրային հարաբերությունների վերաբերյալ: Հանրային հարաբերությունների կառավարման սկզբունքները, հնարավորությունները, նպատակը և խնդիրները: Հանրային հարաբերությունների տեսակները և ձևերը: *Թեմա 2.* Հաստատությունը որպես համակարգ: Հաստատությունը

որպես համակարգ և նրա առանձնահատկությունները: Կրթական հաստատությունը որպես համակարգ: Հանրային հարաբերությունների կառուցվածքը՝ օպերատիվ, կոնցեպտուալ, կառավարման: PR-ը որպես հանրային հարաբերությունների ոլորտի վերահսկման արդյունավետ միջոց: Հանրային հարաբերությունների իրականացման գործառնությունները: *Թեմա 3.* Հանրային հարաբերությունների քաղաքականության ներդրում և հանրային հարաբերությունների մշակույթի ձևավորում: Հանրային հարաբերությունները որպես բուհական կառավարման գործիք: Հանրային հարաբերությունների համակարգի ներդրումը կրթական հաստատությունում /ԿՀ/, դրանց կազմակերպման մոտեցումները և սկզբունքները: Հանրային հարաբերությունների հիմնական ուղղությունները և նրանց առանձնահատկությունները՝ ներքին և արտաքին: *Թեմա 4.* Իրավական և էթիկական ասպեկտները հանրային հարաբերությունների գործունեության մեջ: Հանրային հարաբերությունների վերաբերությունը պետական տարվող քաղաքականության հանդեպ: Կրթության մեջ հանրային հարաբերությունների կապը պետական և տեղական կառավարման մարմինների /ՏԻՄ/ հետ: Համագործակցային կապ հանրային հարաբերությունների և պետական և ՏԻՄ-երի միջև: Մասնագիտական վարքի էթիկական նորմերի ձևավորումը կրթության մեջ: Հանրային, համագործակցային և մասնագիտական պատասխանատվություն: *Թեմա 5.* Հանրային հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները: Հաստատության մեջ տեղեկատվության հավաքագրում և մշակում: Հաստատության վերաբերյալ տեղեկատվության տարածման քաղաքականություն: Տեղեկատվության տարածման միջոցները և հնարավորությունները: *Թեմա 6.* Հանրային հարաբերությունները ՋԼՄ-ների միջոցով: Հաստատության վերաբերյալ տեղեկատվության տարածման տեսակները և ձևերը ՋԼՄ-ների միջոցով: Հայտարարություններ, մեկնաբանություններ, պաշտոնական տեղեկատվություն: *Թեմա 7.* Հանրային հարաբերություններ և հաղորդակցություն: Հանրային հարաբերություններ և ինտեգրված մարկետինգային հաղորդակցություն: Հանրային հաղորդակցության մոդելներ: Հանրային հարաբերություններ, շուկայագիտություն և գովազդ հարաբերակցություն: *Թեմա 8.* Հանրային հարաբերություններ կրթական հաստատության մեջ: Հանրային հարաբերությունների կարգավիճակը. Հանրային հարաբերությունների և հաստատության անձնակազմի դերը ռազմավարական և ընթացիկ որոշումների ընդունման մեջ. Հանրային հարաբերությունների ստորաբաժանման անհրաժեշտությունը կրթության կազմակերպման մեջ: *Թեմա 9.* Ներքին հանրային հարաբերություններ: Ներքին PR-ի նպատակն ու խնդիրները: Ներքին PR-ի բաղադրիչները: Համագործակցային կուլտուրայի առկայություն: Ստորաբաժանումների արդյունավետ համագործակցություն: Մոտիվացիայի առկայություն /ներքին և արտաքին/: *Թեմա 10.* Արտաքին հանրային հարաբերություններ: Կազմակերպության արտաքին կապերը: Շահակից կողմեր: Մրցակից կողմեր: Կրթական հաստատության շրջանավարտները որպես արտաքին կապերի ապահովողներ: *Թեմա 11.* Հանրային հարաբերությունները ճգնաժամային իրավիճակներում: Հասկացություն ճգնաժամային իրավիճակների վերաբերյալ: Ճգնաժամերի տիպաբանություն: Հաղորդակցությունը ճգնաժամային իրավիճակներում: Հակաճգնաժամային ծրագրեր հանրային հարաբերությունների համատեքստում: Ճգնաժամերի կառավարում և լուծման ուղիները: Տեղեկատվական ներքին և արտաքին հոսք: Չճշտված տեղեկատվության

չեզոքացում: Վարչական աշխատակազմի վարքի դրսևորումները չզնաժամային իրավիճակներում:

Մոդուլ 7. Մագիստրոսական թեզ

Գիտահետազոտական պրակտիկա - 135 ժամ, (4.5 կրեդիտ)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ընդլայնել մագիստրանտների ուսումնական գործընթացում ձեռք բերած մասնագիտական գիտելիքները և իրականացնել ինքնուրույն գիտական աշխատանք, ձևավորելով գործնական կարողություններ և հմտություններ: Գիտամանկավարժական պրակտիկան նախատեսում է նաև.

- ամրապնդել, խորացնել և լրացնել հատուկ դասընթացներին ուսումնասիրած տեսական գիտելիքները,
- ձեռքբերել կոլեկտիվում աշխատելու կառավարչական, կազմակերպչական և դաստիարակչական աշխատանքի փորձ,
- հավաքել ուսանողի գիտամանկավարժական աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութ,
- մագիստրանտի ավարտական աշխատանքի նյութերի հավաքում:

Ուսանողներին ծանոթացնել ՀՀ-ում իրականացվող բուհական ծրագրերին՝ ուղղված միջազգայնորեն ընդունված չափանիշների համապատասխանեցմանը, օգնելով գործնականում կիրառելու ստացած մասնագիտական գործնական ու տեսական գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Կրթական արդյունքները.

Մագիստրանտը պետք է տիրապետի.

- հետազոտական մեթոդներին և փորձարարական աշխատանքներ վարելուն, հետազոտական գործիքավարության օգտագործման կանոններին,
- փորձարարական և էմպիրիկ տվյալների վերլուծման և մշակման մեթոդներին,
- այն արժեքներին, սկզբունքներին և փորձին, որոնք նպաստում են արդյունավետ առաջնորդությանն ու կառավարմանը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում,
- փորձարարական միջոցներին և ձևերին:

Գիտենա.

- գիտական աշխատանքների կազմակերպման, պլանավորման և իրականացման ձևերը,
- հետազոտական գործիքներն օգտագործելու կանոնները,

- ուսումնասիրվող խնդրին վերաբերող հայրենական և արտասահմանյան գիտնականների գիտատեսական մոտեցումները,
- գիտաճյուղում կուտակված հետազոտության թեմային վերաբերող տվյալների վերլուծման մեթոդները:

Կարողանա.

- վերլուծել և մշակել էմպիրիկ և փորձարարական տվյալները,
- ստացված գիտելիքները կիրառել օրենքների և օրինաչափությունների, հայտնագործությունների և բացահայտումների տեսքով,
- ձևակերպել գիտահետազոտական աշխատանքի արդյունքների,
- կատարել պրակտիկայի ծրագրով նախատեսված անհատական հանձնարարությունները,

նպաստել համալսարաններում առկա ուսանողների և անձնակազմի զարգացմանը, հիմնական մարտահրավերների, տեղական /ազգային և շահառուների կարիքների վերհանմանը:

Բովանդակությունը.

Ուսումնամեթոդական վարչություն.

- մագիստրոսական թեզի հիմնախնդրի լուծման հետ կապված նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրություն,
- կրթության ոլորտում պրոֆեսիոնալ գործունեությունը իրականացնելու համար ծանոթանալ ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման և վերահսկման աշխատանքների հետ,
- մասնակցել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային պլանների մշակման գործընթացի կազմակերպմանն ու վերահսկմանը,
- ներառվել վճարովի կրթական ծառայությունների կազմակերպման աշխատանքներին,
- ուսումնական գործընթացի ժամանակացույցի կազմում,
- ներառվել ուսանողների շարժի հետ կապված (ընդունելություն, հեռացում, ուսանողական իրավունքների վերականգնում, տեղափոխություն, տարկետում և այլն) կարգերի և հրամանների հետ տարվող աշխատանքներին,
- առկա և հեռակա բաժինների ուսանողների անձնական գործերի ուսումնասիրություն:

Դեկանատ

- գիտահետազոտական գործունեությունը լիարժեք իրականացնելու և հետազոտական արդյունքների նշանակությունը կանոնակարգելու նպատակով ընդգրկվել նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրության գործընթացում,
- ֆակուլտետի նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունների արդյունքում կարողանալ մշակել վերլուծել և հիմնավորել ուսումնական գործընթացի կարավարման արդյունքները,
- ձևակերպել ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ,
- ֆակուլտետի խորհրդի նիստի որևէ արձանագրությունից քաղվածքի կազմում,

- գիտահետազոտական գործունեության ուղղվածության, բովանդակության ուսումնասիրություն, վերլուծություն, բացահայտում, հայտնագործում:

Ամբիոն

- մագիստրոսական թեզի հիմնախնդրի լուծման հետ կապված նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ամբիոնի նիստերի արձանագրությունների ուսումնասիրություն, շերտային և ձևաբանական վերլուծություն, դասակարգում,
- դասախոսների ժամաբաշխման աշխատանքների, օրացույցային պլանների, հաշվետվությունների ուսումնասիրություն և կազմում, նոր գաղափարների առաջարկում,
- առարկայական ծրագրերի, ուսումնամեթոդական փաթեթների ուսումնասիրություն,
- ամբիոնի նիստի որևէ արձանագրությունից քաղվածքի կազմում:

Գիտամանկավարժական պրակտիկա – 135 ժամ (4.5 կրեդիտ)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել ՀՀ-ում իրականացվող բուհական ծրագրերին՝ ուղղված միջազգայնորեն ընդունված չափանիշների համապատասխանեցմանը, օգնելով գործնականում կիրառելու ստացած մասնագիտական գործնական ու տեսական գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Կրթական արդյունքները.

Գիտենա

ԲՈՒՀ-ի հաշվետու փաստաթղթերը,

- ԲՈՒՀ-ի կառավարման մեթոդները, ոճերը
- կառավարման համակարգի սուբյեկտների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները:

Կարողանա

- ձևավորված մասնագիտական կարողությունները, հմտությունները կիրառել աշխատանքում
- կատարել քննադատական վերլուծություն և ինքնաքննադատման ունակություն,

Տիրապետի.

- ԲՈՒՀ-ի կառավարմանը վերաբերող գիտելիքներին,
- ինքնուրույն հետազոտության մեթոդներին և հետազոտության արդյունքները մեկնաբանելու կարողություններին:
- գիտելիքները գործնականում կիրառելու կարողությանը, տեղեկատվությանը կառավարելու ունակությանը

Բովանդակությունը.

Ուսումնամեթոդական վարչություն.

- նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ծանոթացում ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման և վերահսկման աշխատանքների հետ,
- ծանոթացում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային պլանների մշակման գործընթացի կազմակերպմանն ու վերահսկմանը,
- ծանոթացում վճարովի կրթական ծառայությունների կազմակերպման կարգի հետ
- ուսումնական գործընթացի ժամանակացույցի կազմում,
- ծանոթացում ուսանողների շարժի հետ կապված (ընդունելություն, հեռացում, ուսանողական իրավունքների վերականգնում, տեղափոխություն, տարկետում և այլն) կարգերի և հրամանների հետ,
- առկա և հեռակա բաժինների ուսանողների անձնական գործերի ուսումնասիրություն:

Դեկանատ

- նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ֆակուլտետի նիստերի արձանագրությունների ուսումնասիրություն,
- ֆակուլտետի խորհրդի նիստի որևէ արձանագրությունից քաղվածքի կազմում,
- գործունեության ուղղվածության, բովանդակության ուսումնասիրություն:

Ամբիոն

- նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ամբիոնի նիստերի արձանագրությունների ուսումնասիրություն,
- դասախոսների ժամաբաշխման աշխատանքների, օրացույցային պլանների, հաշվետվությունների ուսումնասիրություն և կազմում,
- առարկայական ծրագրերի, ուսումնամեթոդական փաթեթների ուսումնասիրություն,
- ամբիոնի նիստի որևէ արձանագրությունից քաղվածքի կազմում: